ՊԵՏՐՈՍ ՄՈՍԷՍՈՎ ՍԻՍԼՅԱՆ

ՄՏՍՍԻԳՎԱԾ Է 1961 Թ.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՌԻՓԸ

(ՊՈԷՄԱ)



Ա 5759

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Ե. Հասապետանցի
1909

ՆՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ԳՈՎՀԱՆՆԷՍ ՑԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐ.

„Թէպէտ եւ եմ ածու փոքր եւ քնոյ այլով յոյսով անգամ նուաճեալ բազաւորութեամբ, սակայն բազում զորձ աւուրքս զանձն զործեալ 'ի մեջս ոչխարին եւ առանի զոց չիսուսակի։"

ԽՈՐԻՆԱՑԻ.

ՆԱԽԵՐԳԱՆՔ.

Այնտեղ, ուր այսօր խորին թախիծով
Ցղմուտն է հոսում ոլոտոր ու վարար,
Ուր գիշեր ցերեկ քամին մենաստր
Երգում է անվերջ մի երգ ցաւագար,

Ուր բիւր սերունդներ մէկ մէկից յետոյ
Դարերից ի վեր եկան ու անցան,
Եւ որոնք այսօր թողած մի հառաչ
Սառն հողի գրկում հանգչում են անձայն.

Այնտե՛ղ, այն երկրում որպէս մի տանդ
Կանգնած են տխուր լեռներն Արտագի,
Եւ խոր ցաւերով յիշում են անվերջ
Փառքի օրերը հին սերունդների։

Ո՜, բարի անցորդ, քո հոգին այնտեղ
Պիտի խոր խոցուի դառն ցաւերից,
Եթէ մի բոպէ յիշես ըերկրութեամբ
Թէ ինչո՞ւ անցան այն լերանց գլխից։

Այնտեղ, ուր այսօր արծիւն է ճչում
Մռունչն առիւծի գոռում արձագանգ,

Ուր խիտ անտառը խոր է հառաչում
Որպէս մի ընկճուած ծերուկ հոգեվարքը,

Այնտեղ երբեմն անուշ էր լսվում
Հզօր յաղթութեան երգի աղաղակ,
Այնտեղ ռազմիկը յաղթողի փառքով
Աղատ էր հնչում օրհնութեան նաւագ։

Իսկ այն սուրբ լերանց խոր անձաւներում
Էլ չկան այսօր հզօր մարտիկներ,
Որոնց ճիչերից առիւծն էր դողում,
Արծիւը թռչում հեռաւոր լեռներ։

Եւ ուր երջանիկ նախնի երգիչներ
Իմ անմահ նախնեաց գովքն են միշտ արել,
Այսօր, ո՜ Մաւսա, կորցրած ամեն փառք
Մեղ պէտք է սգի տխուր երգ երգել։

Սակայն ների՜ր ինձ, եթէ երգս հնչուի
Որպէս սրգուորի լալագին մրմունջ,
Ինչպէս ցուրտ աշնան քամուց բեղարած
Խեղճ տերևների արձակած շշունչ.

Կամ որպէս անոք մի ցաւագարի
Վերջին ժամերի արձակած հառաչ,
Որը չի մարում աստղերի ներքև
Ցաւոտ աշխարհի վաղճանից առաջ։

Բայց ոչ, ի՜մ Մուսա, ում համար թանգ է
Սուրբ չիրիմներն իր նախորդների,
Ով որ սիրում է իր փառքը հարանց՝
Նրա երգերը տրխուր չեն լինի։

Դէհ, լսիր ուրեմն երգըս հմայիչ,
Անցած դարերի այս մեծ յաղթանակ
Լսիր որ ինձ հետ օրհնես հերոսիս—
Անմահ Վահանի ազնիւ յիշատակ։

ԴՈՒԱԴ Ա.

ՎՇՏԻ ԵՐԳԻՉԸ.

„Եւ զնայր զշրավարն Հայոց Վահան Մամիկոնեան յամուր ձեղիս սահմանացն Խաղտեաց ոգի առնուլ եւ հանգչիլ առ վայր մի՝:
ՓԱՒՍՏՈՍԻ

Ծայռոտ լեռան լանջի վերայ
Մի ամրոց կար բարձրացած,
Որի ներքև ծովն էր շաչում
Բերնին փրփուր, կատաղած:

Պինդ խփում էր ծովն անընդհատ
Մշտադալար եղեգներին,
Հեռա՛ծ, ընկա՛ծ ափի վերայ
Որոտ հանում դառնագին:

Խոր հառաչով աղմկում էր
Շաչող քամին հարաւի,

Ծովի ափին կանգ առնելով
Լսում էր երգն ամեհի։

Իսկ այն դալար ափի վերայ
Բարձրանում էր ծեր մայրին
Խրոխտ ու լուռ կանգնած մենակ
Դիտում հսկայ ամրոցին։

Եւ մայիսեան չքնաղ մի օր
Մի ծեր գուսան տխրագին,
Նըստեց յոգնած այն ծառի տակ
Դէմքը դարձրած ամրոցին։

Տանջուած սրտի հառաչանքով
Նա յարդարեց իր քընար
Եւ մեղմ խըփեց իր լարերին
Ցաւած սրտով վշտահար։

Ալիքների որոտի հետ
Մեղմ քընարը հառաչեց,
Եւ լարերի քաղցր ձայնին
Անուշ երգը ձայնակցեց.—

„Դուրս եկ Վահան, դուրս եկ գիւղացի
Քո անառիկ ամրոցից,

Տես ինչ լուրեր քեզ բերել եմ
Մեր արնաներկ ուշխարհից։

„Ես գալիս եմ այն վայրերից
Ուր սար ու ձոր թախծագին
Վկայ եղան կտրիճ մարդու
Սրտի վերջին հառաչին։

„Ես անցկացայ հովիտներից
Կարմիր արնով ողողուած,
Տեսայ վարդի թերթը դալուկ
Գորշ արիւնով սևացած։

«Ո՜, այն դուշաում միայն հողմն է
Որ հառաչում է ուժգին,
Ծմակն է մութ ականջ դընում
Գիշակերի կառանչին։

Իսկ երկնքից շողքը լուսնի
Դալուկ դէմքերն է շոյում,
Մեղմիկ քամին դաշտի միջին
Նրանց սև օրն է ողբում։

„Դո՞ւրս եկ դիւցազն, դուրս եկ, լսի՛ր,
Խո՛ր են սրտիս վէրքերը,

Երգչի սիրտը խիստ է տխրում
Երբ չեն լսում երգերը՝՝։

Ծեր դուսանը երգը կտրեց
Կըտրեց ձայնը բամբիռի,
Բայց շռինջով չ՝բացուեցան
Լայն դռները ամրոցի։

Շատ սպասեց ծեր երգիչը
Նայեց ծովին փոթորկած,
Ապա ելաւ, քնարն առաւ
Ու հեռացաւ վշտացած։

Մինչ ծովն ահեղ ափերի մէջ
Մերթ շաչում էր հառաչում,
Կամ թէ նորից ծափեր տալով՝
Խռպոտ ձայնով շառաչում,

Եւ մինչ հովը դալար հովտում
Ցօղն էր խլում բոյսերից,
Քնած մայրին նոր էր զարթեալ
Արշալոյսի շոգքերից՝

Մեծ ծառի տակ նորից նստեց
Այն գուսանը քաղցրաձայն,
Նորից նայեց լուռ ամբոցին
Նորից երգեց բարձրաձայն.—

—«Դուրս եկ, Վահան, դուրս եկ դիւցազն
Դուրս եկ ահեղ ամբոցից,
Խեղճ գուսանիս սիրտն է այրվում
Հայրենիքի ցաւերից։

«Էլ ինչ հանգիստ, էլ ինչ խնդում
Երբ ծեր գուսանն է լալիս,
Լսիր նրան, անյաղթ իշխան
Թէ ուսկից է նա գալիս։

«Աւերակ է հայ աշխարհը
Ձէն, աւաններ էլ չկան,
Քարքանդ երկրի խարոյկներից
Ծուխն ու հուրն էլ մարեցան։

«Աւեր դարձրեց անգութ ձեռքը
Սիրուն աշխարհն հայրենի,
Եւ կտրիճի ձեռքերն անյաղթ
Փաթթեց շղթան օտարի։

«Էլ չի լսվում զէնքի շաչիւն
Քարանձաւի մութ կիրճից,
Չի որոտում հայ ռազմիկը
Սև ժայռերի բարձունքից։

«Եւ ծերունի անբաղդ հայրը
Որդու շիրիմն է փորում,
Սրտի վերջին ցաւն ու հառաչ
Ուեր երկրին աւանդում։

«Իսկ դու դարձեալ լռեա՛ ես իշխան,
Առանձնացած ամրոցում,
Հայրենիքի վիշտն ու արցունք
Քո վեհ սիրտը չեն տանջում։

Նորից լռեց ծերը գուսանը
Հոգոց հանեց դառնագին,
Արտասուալից իր աչերը
Դարձրած հսկայ ամրոցին։

Բայց դռները ահեղ բերդի
Չ'բացուեցան շառաչով,
Հին ամրոցը քուն էր մտել
Քունն էր խորո՛ւնկ, անվրդո՛վ։

Ապա յոգնած այն գուսանը
Մի կողմ դրեց իր քընար
Աչքը գցած կապույտ ծովին
Սկսեց նայել միալար։

Հանդարտ հովը ծովի խորքից
Ցիշատակներ էր բերում,
Եւ հանդիստը տանջուած սրտի
Նորից յուզում, աղմկում։

Իսկ ծփանքները իրար խառնած
Մեղմիկ ձայնով դիւթական,
Խոր ու հանդարտ հառաչում էր
Ահեղ ծովը Պոնտական։

Եւ ծերունին լուռ ու երկար
Ականջ դրեց այդ ձայնին,
Որ նման էր իր յուսահատ
Այրուած սրտի յոյզերին։

Շատ տարիներ նրա սիրտն էլ
Այդպէս մեղմ էր աղմկում,
Նրա վիշտն էլ ի՞նչ էր, անծայր
Ինչպէս ծփանքն այն անհուն։

Իսկ այս անգամ ծեր գուսանը
Ուզեց հանպչիլ ծառի տակ,
Ցոգնած մարմնով տարածուեցաւ
Երկնքի տակ կապուտակ։

Զեփիւռն էր լոկ, որ անցնում էր
Նրա յոգնած ճակատից
Ծերուկ ծառն էր օր օր երգում՝
Օ՛ր օր երգում թախծալից։

Իսկ մեղմ ծովը բիւր ծրփանքով
Անվերջ աղմուկ էր հանում,
Կարծես ծերուկ հայ գուսանի
Անուշ երգերն էր կրկնում։

Խորհրդաւոր լրութեան մէջ
Խաղաղ քնեց ծերունին.
Խոպոպները ուսին թափած
Քնարն ընկած իր կշտին։

A 57859 30727

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՏԵՍՈՒՉՈՒԹԻՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՆՈՒԱԳ Բ.

ԳԻՇԵՐ.

„Չիմ ումէմ հաղցրագոյն քան
զձնոցս եւ ոչ քան զգաւառ իւր“:
ԵՂԻՇԷ:

Ստղերն անթիւ, անհուն երկնից
Վար են նայում թախծագին,
Եւ գողգողջուն դիտում լըռիկ
Խոր քուն մտած աշխարհին։

Չինչ կապույտը ցող է մաղում
Արևատապ բոյսերին,
Ցոդնած ամպը քարշ թևերով
Շոքում ժայռի լանջերին։

Խոր քնած են հայոց երկրի
Հսկայ ժայռերն ահաւոր,

Հովերն անգամ չեն վրդովում
Նրանց անուշ քունն անդորը։

Քունն հանգիստ է յոգնած երկրի
Հևը կտրած է նիրհում,
Իսկ զեփիւռը անուշ սիրով՝
Իր ժպտի հետ է խաղում։

Ո՜, քունդ անո՜ւշ, յոգնած երկիր,
Աչքդ փակիր մինչև լոյս
Երբ կը բացուի նոր առաւօտ
Եւ ոսկէվառ արշալոյս։

Խաղա՛ անուշ մեղմ ժըպտի հետ
Առաւօտեան զեփիւռի,
Ուրա՜խ, անդորը ականջ դիր դու
Մեղմիկ ձայնին հովերի։

Քեզ չեն խափանում քո յոյսերը
Դու կը տեսնիս փառք ու լոյս,
Քնիր հանդարդ յոգնած երկիր
Մինչև ծագէ արշալոյս։

Եւ վեհ օրտով ուրախացիր
Ո՜վ հայրենիք սրբազան,

Հըղիթայակապ որդիներդ
Միշտ ձգտել են փրկութեան։

Կապանքները չեն կաշկանդել
Ազատասէր այն ոգին,
Որ դորերով անկախ պահեց
Մեր աշխարհը թանգագին։

Իսկ դու գիտես որքա՜ն ծանր են
Ստրկութեան շղթաներ,
Դրա համար ազատ ոգուդ
Հը փաթթեցիր կապանքներ։

Եւ թող քնին Մասեաց սարեր
Քնին Նպատ ու Սիփան,
Քանի այդպէս զէնքեր ձեռին
Պաշտպան ունին յաղթական...

Սև ժայռերի կատարներից
Լուսինն ելաւ դողդողջուն
Եւ լոյս սրփռեց սարին, ձորին
Եւ գետերին կարկաչուն։

Հանդարտ նաւով կըարեց, անցաւ
Լայն կապոյտը երկնքի,

Դալուկ լուսով նա ողողեց
Կատարն հպարտ Քարքէյի:

Կըտրեց, անցաւ անթիւ ամպեր
Իր երկնային նըհանգից,
Եւ Դըշխուհու չքնաղ ծովում
Կարօտն առաւ հայ երկրից։

Խաղաց, ժպտաց ու ողողեց
Արծաթափայլ ջրերը.
Անուշ սիրոյ վառ կարօտով
Լսեց ծովի համերգը։

Ապա նա լուռ, հեզիկ քայլով
Սիրտը անվախ ու անդորը
Սկսեց անցնել կամաց կամաց
Մութ անտառը դարեւոր։

Հայոց երկրի լուսինն ուրախ
Ճողեր ցողեց այն վայրում,
Ուր որ անթիւ դարերից հետ
Հայ ռազմիկն էր խրոխտում։

Սակայն երկնից հեզիկ կոյսը
Արագ անցաւ այն բարձրից,

Որ չ'փախցնէ անուշ քունը
Հայ քաջերի աչքերից։

Առաջ անցաւ դէպ Այրարատ
Ողջոյն տալու ծեր լեռան,
Որ կանգնած էր հպարտ ու վեհ
Որպէս աւանդ սրբազան։

Եւ կարօտի անուշ նազով
Ողջոյն տուեց ծեր սարին,
Շողքը քցած ոլոր-մոլոր
Սլսուրեանի ջրերին...

Ապա անցաւ ժայռոտ Տայքի
Հոկայական լեռները,
Որոնց վերայ հարգչում էին
Հայոց անյաղթ բերդերը։

Ուր Պոնտոսի ծովի ափին
Տեսաւ ամբոցն Երախան,
Ծանիքները երկինք ուղղած
Որպէս վիշապ անսասան։

Տեսաւ այնտեղ մենակ նստած
Հայոց Բարգէն գուսանին,

Որ խրփում էր սիրտը կրակ
Բամբռի անուշ լարերին.

Որ թողնելով մենակ, տխուր
Իր սիրուհուն ողբալու,
Դուրս էր եկել Գողթան երկրից
Ազգի ցաւը երգելու։

Եւ լուսինը լսեց վերից
Երգը մատաղ դուսանի,
Ուղղած հղօր ու միշտ անյաղթ
Հայոց քաջին ամեհի։

ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ

—«Դուրս եկ Վահան, դուրս եկ դիւցազն,
Եւ կրուի դաշտ ըշտապիր,
Քեզ է կանչում հայրենիքը
Դէպ Զարեհանդ սրլացիր։

„Հայոց քաջին մեծ ամօթէ
Ցանը նստել միայնակ,

Երբ հայրենիքն հառաչում է
Բռնակալի լծի տակ։

«Զէնքը ձեռին քեղ են սպասում
Հայրենիքի քաջերը,
Հառաչում են հայոց Մասիս,
Արտաղ, Սիփան լեռները։

«Հայ կտրիճը վայր չի՛ դընէ
Ա՛հեղ զէնքը իր ձեռքից,
Քանի աւեր հայրենիքը
Հառաչում է խոր ցաւից։

«Քարանձաւի անանց կիրճում
Զէնք են սրում ու զինվում,
Նրանց ձայնի գոռ որոտը՝
Սար ու ձոր է դղրդում։

„Ուիւծն այնտեղ փախս է տալիս
Հայ քաջերի մռունչից,
Վախից արծիւն էլ չի՛ անցնում
Հայոց լերանց վերայից։

«Աւեր երկրի սար ու ձորեր
Գրակ դարձած քեղ կուղեն,

Հասիր դիւցազն, հասիր շուտով
Արտազ լերինք քեզ կուզեն։»

Եւ լուսինը պայծառ երկնից
Լսեց երգը դիւթական,
Որ գովում էր հայոց երկրի
Կըտրիճներին յաղթական։

Ու թողնելով հայ գուսանին
Խոհերի հետ առանձին,
Լուսինն անցաւ ողջոյն տալու
Համատարած մեծ ծովին։

Իսկ գուսանը նորից երգեց,
Բամբռին խփեց նա նորից,
Բայց գիշերուան խաղաղ ժամին,
Մարդ դուրս չելաւ ամրոցից։

Եւ վշտացած հայ երգիչը
Ցիսուր սրտով վեր կացաւ,
Փոշոտ բամբիռն ուսին քցած
Արագ—արագ հեռացաւ...

ՆՈՒԱԴ Գ.

ՅՈՎՀԱՆ ԳՈՐՕՇՆԸ.

Շատ ու շատ վչտեր եկան, անցան
Այն տարաբաղդ օրերից,
Երբ հեռացաւ իր տուն-տեղից
Յովհան գուսանը վչտալից։

Երբ որ թողեց Գողթան երկիր
Վանանդ գիւղը հայրական,
Ուսին քցած իր բամբիռը
Գնաց շրջել Հայաստան։

Նա մոռացաւ կին ու զաւակ
Եւ սիրող մօր արցունքներ,

Մի հոգս մնաց—ազգի ցաւը
Հայրենիքը իր աւեր։

Հայոց երկրի վիճակն անբաղդ
Արիւն քամեց իր սրտից,
Եւ սև ցաւի խոր խոցերով
Երգեր հիւսեց վշտալից։

Բայց և ինչեր նա չըտեսաւ
Դժբաղդ երկրի ծայրերում,
Ուր թշնամու անարդ ձեռքով
Հայ աշխարհն էր աւերվում։

Տեսաւ Արտագն աւեր դարձած
Հին Զարեհանդն արնալից,
Տեսաւ ծուխը վեր բարձրացող
Ռըշտունեաց դաշտերից։

Տեսաւ հայոց քաղաքների
Աւերակներն ահաւոր,
Որոնց միջին անդուր ձայնով
Բուն էր երգում սրգաւոր։

Իսկ ամայի դաշտերի մէջ
Մի կատանչ էր նա լսում,

Որ օդի մէջ միշտ ճախրելով՝
Արնոտ դիակ էր փնտրում։

Տեսաւ հողի հետ հաւասարած
Բերդ ու պարիսպն հայ երկրի,
Տեսաւ վանքերն աւեր ու լուռ
Առանց անուշ երգերի։

Որպէս մի բու խեղճ ու սգաւոր
Այդ լուռ վայրերն այցելեց,
Անմահ նախնեաց փառքն յիշելով
Երկար տանջուեց ու երգեց։

Լացեց աւեր Այրարատում
Սիսուրեանի ափերին,
Գնաց պատմեց սրտի վիշտը
Վանայ վճիտ ջրերին։

Գնաց տեսաւ արնով ներկուած
Ուրմիական մեծ ծովը
Լսեց այնտեղ—ինչ էր երգում
Շար հարաւի սև հովը...

Եւ այդքան վիշտ, ցաւ ու տանջանք
Տեսաւ երգիչն հայրենի,

Ապա ընկած գիւղ ու քաղաք՝
Պատմեց վիճակն հայ երկրի։

Նա անցկացաւ Տարօն ու Մուշ
Հասաւ մինչև Աշտիշատ,
Գնաց երգել հեր, Զարևանդ,
Նորից դարձաւ Արտաշատ։

Գնաց հասաւ Տիգրանակերտ
Ապա դարձաւ մինչ Դըւին,
Ծայռոտ Վանանդն անցնելով՝
Հասաւ Տայքի բերդերին։

Եւ ողջ երկրում տեղ չմընաց
Որ գուսանը չայցելէր,
Ու խրփելով իր բամբիռին
Աղգի ցաւը նա չերգէր։

Իշխանական պալատներում
Աղգի սուգը նա պատմեց,
Անուշ երգի տխուր խօսքով՝
Լսողների սիրտն այրեց։

Մենաստանի լուռ պատերը
Նրա երգից թրնդացին,

Եւ ռազմական երգի ձայնից
Բերդերն հայոց խնդացին։

Ողջ աշխարհում մարդ չ'մնաց
Որ չ'լսէր իր երգը
Եւ չ'խոցէր ու բորբոքէր
Արնոտ սրտի խոր վէրքը։

Երկար դարեր միշտ, անընդհատ
Գողթան երկրի երգիչներ
Անցնում էին հայ աշխարհը
Եւ հնչեցնում բամբիռներ։

Ուսին գցած մի հին բամբիռ
Թողնում էին տուն ու տեղ,
Եւ անընդհատ շրջում էին
Հայ աշխարհը բազմացեղ։

Սև օրերին երգում էին
Մուգը հայոց աշխարհի,
Անվիշտ օրին անհոգ երգն էր
Հնչվում ուրախ, բերկրալի։

Գնում էին այցելելու
Հայոց վանքերն աւերուած,
Գնում էին անձամբ տեսնել
Հուրն-ու ծուխը բոբբոքուած։

Վտանգներից չերկնչելով
Հասնում էին ամեն գիւղ,
Ցոյս կրտային խեղճուկ հային
Լինել անվախ, աներկիւղ։

Փոշով ծածկուած անցնում էին
Հայոց անանց լեռները,
Հանդիպողին սատմում էին
Հայրենիքի ցաւերը։

Իսկ երբ լինէր հայ աշխարհում
Իշխանական հարսանիք,
Կամ կատարէր շքեղ խնճոյք
Հայոց փարթամ արքունիք,

Գուսանները բամբիռներով
Ուրախ վայրը կերթային,
Եւ այդ տօնի, կամ հարսանեաց
Գովքն ու փառքը կերգէին։

Բայց հայրենի երգիչները
Մի այլ կոչում ունէին,—
Ընկերակցել ռազմի երգով
Հայոց երկրի բանակին.

Ոգևորել կռուող քաջին
Պատերազմի գոռ դաշտում,
Կամ թէ մնալ կրտրիճի հետ
Գրուռի ահեղ խառնուածքում։

Իսկ այս անգամ երգիչն Յովհան
Հայոց աշխարհն անցնելով,
Եկաւ հասաւ Տայք գաւառը՝
Սրտի անհուն ցաւերով։

Ուզեց տեսնել, ցաւը պատմել
Մամիկոնեան Վահանին,
Որ եկել էր բերդն Երախան
Տեսնել իր մայր Զուիկին։

Ուր որ հայոց իշխանները
Երկար դարեր շարունակ,

Գուղարկէին իրանց կանանց
Պատերազմի ժամանակ։

Ուր կապրէին իշխանուհիք
Ազատ ամեն վտանգից,
Ուր չէր հասնում բիրտ թշնամին
Հայոց լերանց սարսափից։

Բայց թէ ինչի՞ հայոց բերդից
Այս անգամին մարդ չելաւ,
Գամ ինչի՞ էր լուռ ամրոցը՝
Խեղճ գուսանը չիմացաւ։

Իսկ հայրենեաց խղճուկ լացը
Չէր թողել տալիս ծեր երգչին,
Թողնել անցնել հին ամրոցը
Դեռ չտեսած այն քաջին...

ՆՈՒԱԴ Դ.

ԵՄԻՑՑԻՄ.

—«Բարո՜վ եկար, բարի Ցովհան
Անուշ երգիչդ հայրենի,
Երախանը ողջունում է
Քո գալուստը ցանկալի։

«Բարո՜վ եկար Գողթան երգիչ
Հայրենիքի խորքերից,
Բարո՜վ եկար, ծերուկ գուսան
Հայոց աւեր աշխարհից։

«Մեր աշխարհի վիշտն ես լալիս
Անուշ ձայնով մեղմագին,
Վիշտդ երգէ, բարի՜ երգիչ
Ու միշտ վառէ մեր հոգին։

«Բայց դիւցազնին զուր ես փնտրում
Այս անառիկ ամրոցում,
Նա էլ գնաց զէնքը ձեռքին
Ուր հայրենիքն էր կանչում։

«Մթթէ անգործ, տանը նըստած
Անփոյթ աչքով կը դիտէր,
Թէ բանութեան անարգ շղթան
Ինչ՝պէս պէտքէ կապկապէր։

«Ո՜, նա գիտէր որչափ ծանր է
Լուծը անարգ օտարի,
Նրա աչքից քունն էր փախցրել
Վիճակն հայոց աշխարհի։

Բայց դո՜ւ զուսան, գնայ նորից
Անցիր Արտազ ու Դրւին
Նւ ժայռերի ահեղ գրկում
Գտիր հայոց քաջերին։

«Քո բամբռի անուշ ձայնով
Ընկերացիր դու նրանց,
Գովէ անվախ, յոյս ներշնչէ
Երգիր փառքը մեր հարանց։

«Եւ այն վայրում վկայ դարձած
Հայ քաջերի գործերին,
Բիւր երգերով նրանց փառքը
Դու կաւանդես դարերին»։

Այս խօսքերով դիմաւորեց
Զուիկ տիկինը նազելի,
Երբ որ լսեց ամլոց դալը
Հայոց ծերուկ դուսանի։

Ապա յայտնեց, որ իր վաշտով
Գնացել էր Թուղարս բերդ,
Որ տեսակցի Արծրունեաց
Քաջ ու անվախ տիկնանց հետ։

Ուր ժողոված ամուր բերդում
Կանայքն հայոց փաւիկասուն,
Որոշել են խորհուրդ կազմել
Մամիկոնեանց ամրոցում։

Եւ ուր նրանք պիտ որոշեն
Ի՞նչպէս օգնել խեղճ ազգին,
Որ արնաքամ ընկած մենակ
Հառաչում է ցաւագին։

Երբ որ լսեց այս ամենը
Հայ դուսանը քաջցրաձայն,
Անուշ դողով սիրտը լցուեց
Մտքերն իրար խառնուեցան։

Ապա տիկինն հրամայեց
Նաժիշտներին գեղանի,
Քցել փափուկ, տաք անկողին,
Լուալ ոտքերը դուսանի։

Եւ թողնելով երդչին ծերուկ
Խոհերի հետ առանձին.
Շքնաղ տիկինն ու կուսանքը
Մեծ ամրոցում ցրուեցին։

Դեռ չէր հանդչել հայոց բերդում
Ցողնած երգիչն ալեհեր,
Երբ ամրոցի ամեն կողմից
Ժողովուեցան դինուորներ։

Կարօտագին համբոյրներով
Ողբասեցին դուսանին

Պատմել անցած հարանց փառքը,
Երգեր երգել Թախծագին։

Եւ զգացուած ծերուկն ուրախ
Խրփեց բամբռի լարերին,
Գովեց բերդը Երախանի,
Գովեց հայոց քաջերին։

—«Ծայռի գլխին բարձրանում է
Հայոց բերդը Երախան,
Ծովի ափին ահեղ, հպարտ
Բերդն է կանգնած անսասան։

„Հողմ ու քամի զուր են շաչում,
Խրփում ամուր պարսպին,
Զուր է փրփրում ահեղ ծովը՝
Ու հառաչում սաստկագին։

«Հին ամրոցը երկար դարեր
Ծովի խաղին է նայում,
Լսում նրա հանդարտ լացը՝
Խոր հառաչն ու որոտում։

«Եւ իր հսկայ բարձունքներից
Նա ծաղրում է մեծ ծովին,

Մեղմ հեգնանքով դէմ է կանգնում
Անհեղասաստ հողմերին։

«Ու թող մնայ այդպէս հպարտ
Անյաղթ ամրոցն հայկական,
Քանի այդպէս զէնքեր ձեռին
Քաջեր ունի պահապան։

„Ու բամբիռդ ծերուկ գուսան
Հայոց երկրի գովքն երգիր,
Ու բամբիռդ երգիչ Ցովհան
Երախանի փառքն երգիր։

„Ժայռի գլխին բարձրանում է
Հայոց բերդը Երախան,
Ծովի ափին ահեղ, հպարտ
Բերդն է կանգնած անսասան։

Որքա՜ն քաղցր, անուշ հնչեց
Դիւթիչ երգը ծերունու,
Որքան խոհեր, վէրք ու հրճուանք
Ցաջորդեցին իրարու։

Հայոց երգչի ձայնը մեղմ էր
Դէմքն արևառ ու յոգնած,
Բամբիռը հին ցաւերի պէս
Խոպոսները խճճուած։

Ո՜, անուշ հնչեց թովիչ երգը
Մելամաղձոտ լուսնի տակ,
Անուշ բաղխեց ծերուկ սիրտը
Ուր այրվում էր մի կրակ...

Երբ գուսանը ձայնը կըտրեց
Ու վերջացրեց իր երգը,
Լսողների սրտերի մէջ
Բորբոքուեցաւ հին վէրքը։

Շուրջ բոլորած ծեր գուսանին
Աղաչեցին բան պատմել,
Դարեր առաջ եկած, անցած
Հայ քաջերի գովքն անել։

Եւ ծերունին սկսեց պատմել
Անմահ նախնեաց գործքերից,
Պատմեց ինչպէս Վահագն քաջին
Երկինք տարան աստղալից։

Պատմից մէկ-մէկ հայ դիւցազնի
Գլխից անցած անցքերը,
Պատմեց սէրը Աստղիկ կոյսի
Նրբա թողած հետքերը։

Եւ անձնատուր խոր յոյզերի
Հայոց գուսանն ալեոր,
Գնաց հասաւ մինչ դարերը
Հիդրաների ահաւոր։

Պատմեց կռիւն անյաղթ Հայկի
Կործանումը թշնամու,
Ցիշեց որդոցը մեր նախահօր
Եւ Արամին ահարկու։

Մէկ-մէկ թուեց յաղթութիւններն
Հայոց Տիգրան արքայի,
Երկար պատմեց կռիւները
Արշակունեաց մեծ տոհմի։

Իսկ զինուորներն ուրախ, զուարթ
Լսում էին գուսանին,
Ոգևորուած ականջ դնում
Նախնեաց անմահ գործերին։

Եւ զգացուած սուրբ յոյզերով
Հրճվում էին, ծիծաղում,
Ու կամարներն հայոց բերդի
Բարձր ձայնով դղրդում։

ՆՈՒԱԴ Ե.

ԿՈՆՈՆՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ

„Միով գոնեաւ ճշմարտութեան
պնդեցվն զմէջս արէ եր կանայք“.
ՆՂԻՇԷ

Ո՜րդ, ո՛վ Հայկակ, ասա՛ դու ինձ
Ի՞նչ կայ աւել սրբանուէր
Քան հայ կնոջ ահեղ ուխտը
Նրա խոստումն անվեհեր...

Ի՞նչ կայ աւել վեհ ու չքնաղ
Քան ռազմասէր հայ կինը,
Որ ուխտում է զէնքով փրկել
Հայրենիքի պատիւը։

Սակայն լսիր, թէ մութ բերդում
Հայոց տիկնայք միասին՝

Ինչպէս կաղմած մի մեծ խորհուրդ
Խօսում էին առանձին։

Խօսում էին Տայոց երկրում
Սպաստանած տիկնայքը,
Որանց համար թանգ էր ու սուրբ
Սիրած աղգի փրկանքը։

Որոնց իր մօտ հրաւիրած
Զուիկ տիկինը նազելի,
Կառաջարկէր օգնել փութով
Հայրենիքին սիրելի։

Այնտեղ էին վեհ ու անյաղթ
Իշխանուհիք Գուգարքի,
Որոնց դէմքին փայլում էին
Սպիները վէրքերի։

Այնտեղ էին բարձրահասակ
Անձնացի քաջ կանայք
Որոնց համար կեանքը չունէր
Ուրիշ մի այլ նպատակ,

Քան թէ կրուել ու ազատել
Հայրենիքը սրբազան,

Որպէս ռազմիկ անվերջ մղել
Մի պատերազմ անսասան։

Եւ հայ կինը, որպէս զայրոյթ
Սրտի թոյնն էր դուրս թափում,
Ուր ուխտում էր մնալ անվախ
Կռիւ մղել անդադրում։

Եւ կանայի չքնաղ սեռին
Ցատուկ քնքոյշ պերճութեամբ՝
Շատ խօսեցին հայ տիկնայքը
Վառուած ազգի փրկութեամբ։

Ո՜, ինչ կար աւել բերկրալի
Քան այդ ուխտը սրբանուէր,
Եւ ո՞ր երկրում կին ու աղջիկ
Այնքան քաջ են, ռազմասէր,

Որքան հայոց ազատ մեծցած
Քաջակորով կանայքը,
Որ դարերով հանդիսացան
Ազգի վսեմ պարծանքը։

Ահա այդտեղ, այդ ժողովում
Ուր շատ հարցեր վճռեցին,

Քաջ Զուիկն ու Վասկանուշը
Վերջում այսպէս խօսեցին.

—„Դէհ. շուտ գրիր, քոյր իմ Զուիկ
Մեր աշխարհի ողջ կանանց,
Որ բացուել է մեր առաջն
Լայն ասպարէզ նոր փառաց»։

Այսպէս ասաց ու հառաչեց
Քաջ տիկինը Գուգարքի,
Որ չէր կարող անփոյթ լսել
Վիշտը հայոց աշխարհի։

—«Ես կը գրեմ Զուիկն ասաց
Քաջ Անահտին Տարօնի,
Որ շուտ կազմէ մի մեծ բանակ
Ու լեռներում պաշտպանուի։

«Իսկ Ռշտունեաց գեղեցկադէմ
Իշխանուհի Զարուհին
Հետը առած կըտրիճ կանայք
Գնայ հասնի մինչ Դրւին.

«Կամ Արտազի լեռների մէջ
Մեր գնդերին սպասէ

Եւ քաջաբար մղած կռուին
Իր վաշտերով մասնակցէ։

«Գամսարական քաջ տիկնայքը
Դեռ վաղուց են պատրաստուել
Հայրենիքի անկախութիւնն՝
Արեան գնով յետ առնել։

„Անյաղթ Սիւնիքն ու Այրարատ
Հազար կանայք մեզ կըտան
Իսկ Արծրունեաց իշխանուհիք՝
Կրակ դարձած մեզ կուգան։

«Եւ մենք այսպէս պէտք է զինենք
Ողջ աշխարհը հայրենի,
Որ թշնամուն ցոյց տանք հայոց
Գնօջ ոյժը վիթխարի։

«Ապա կանանց այս բանակով
Գրոհ կըտանք Արտազում,
Գամ կըհասնենք մինչ Զարևանդ
Ուր լեռներն են հառաչում։

„Այնտեղ անվախ մենք կը սեղմենք
Սուր ու նիզակ մեր կրծքին,

Անվախ սրտով մենք կը վազենք
Դէպի ազգի թշնամին։

«Մենք մեր ճիշի մէջ կը խեղդենք
Ոիրտ քրքիջը բռնութեան,
Գրակ ու բոց և շանթ դարձած
Մենք կը փչենք մեր շղթան։

„Եւ մի՞թէ մեղ մեծ ամօթ չէ
Ո՞վ իմ քոյրիկ անդրանիկ,
Թողնել անվերջ լայ, հառաչէ
Մի սրբազան հայրենիք։

..«Նա որ սնոյց Ղևոնդ, Ներսէս,
Եւ դիւցազներ անհամար,
Նա որ երկա՞ր, երկա՞ր դարեր
Կուռք է դարձել մեղ համար։

«Եւ ասացէք, մի՞թէ հնար է
Ապրել, մնալ կենդանի,
Ուր որ կեանքը լոկ մի շարք է
Անվերջ արնոտ ժամերի“։

Գինը լեց. հայեացքն ուղղեց
Լսողներին նազելի,

Որ մտքերի անծայր ծովում
Խորհում էին վշտալի։

Հակառակել քաջ կնոջը
Նրանց մտքից չէր անցնում
Փրկել ստրուկ հայրենիքը —
Ամենքն էին ցանկանում։

Եւ շատ անգամ այդ տիկնայքը
Ժողովուել են միասին,
Կեանք ու արիւն զոհ բերելու
Հայրենիքի սուրբ գատին։

Շատ անգամ են նրանք գրել
Հայոց անյաղթ առիւծին,
Թէ մեր երկրի կանանց խմբով
Կը մասնակցեն սուրբ կռուին։

Նրանք էին, որ ձայն տուին
Իշխանների ժողովում
«Դուխ մղել մինչև ի վերջ
Եւ չնդունել մի դիջում»։

Այժմ տիկնայքն այդ նազելի
Խորհում էին թախծալից,

Ներկան, անցածն ու գալիքը
Անցնում էին մտքերից։

—«Ծրագրիդ հաւանում եմ
Ձուիկ, բոյը իմ սիրելի,
Այսպէս խօսեց վերջապէս
Գինը Վրէն իշխանի

«Գնանք խառնուենք մեր որդոց հետ
Կրուինք անվախ, համարձակ,
Մեր թոյլ ձայնն էլ մարտի դաշտում
Թող տայ մի նոր արձագանք։

«Ցոյց տանք պարսից արքունիքին
Որքան քաջ է հայ կինը,
Նու պահանջենք մեր նախահարց
Թափած արեան սուրբ գինը։

«Վար չդնենք մեր սրերը
Մինչ հայրենիքն անկախ չէ,
Մինչ մատնութիւնն արնոտ ձեռքով
Մեր քայլերին կը հետևէ

„Վրէժի բոցով մենք սլանանք
Ուր որ պարտքն է մեզ կանչում,

Ո՜, հայրենիք մեր սրբազան
Զուր ես այդքան հառաչում»...

Կինը լռեց ու վեր կացաւ
Սենեակն անցաւ ծայրէ ծայր,
Նորից բաղմեց Թաւշեայ գահին
Նորից խօսեց արիաբար.

—«Դէհ, շուտ արա, գրիր որդուդ
Որ մեզ սպասէ Դրլինում,
Ուր կը կանգնենք մինք քաջաբար
Հայոց զօրքի շարքերում։

„Իսկ այժմ և ետ ճամբայ հանիր
Սուրհանդակներ ժիր, զգօն,
Որ սլանան արծւի թևով
Դէպի Դւին ու Ցարօն։

„Պատգամներդ շուտով տանին
Հասցնեն հայոց քաջ տիկնանց,
Ցայտնեն նաև մեր սուրբ ուխտը
Քաջ զինուորին հայրենեաց»։

Գեղեցկադէմ իշխանուհին
Էլ իր խօսքը չերկարեց,

Մոդաղաթեայ կապոցները
Առաւ տիկնոջը մեկնեց։

Իսկ մաքերի անծայր ծովում
Սուզուած հայոց տիկնայքը,
Դեռ շատ երկար խորհում էին
Սիրած աղդի փրկանքը...

ՆՈՒԱԴ Զ.

ՄԵՄՊՈՒԵՆԻ ՀԱՆԳԻՍՏԸ.

Օրհնեա՛լ լինիս հայոց աշխարհ
Որ միշտ վեհ ես ու անյաղթ,
Օրհնեա՛լ լինիք հայոց հովեր
Որ սահում էք անկապանք։

Օրհնեա՛լ լինիք խոր ձորերի
Ջինջ ու անուշ վտակներ,
Որ շատ անգամ լուացել էք
Մեռնող քաջի խոր վէրքեր։

Օրհնեա՛լ լինիք և դուք դաշտեր
Արնով ցողած քար ու բոյս,
Օրհնեա՛լ լինիս հայոց արև—
Եւ դու պայծառ արշալոյս...

Եւ արշալոյսն հայոց երկրի
Նոր էր զարթել վառի վառ,
Երբ կանգ առան Մամբուանում
Երկ զոյգ ահեղ հրիվաբ։

Նժոյգ հեծած գալիս էին
Երկու շքնաղ աղջիկներ,
Գօտիներից ամուր կապած
Ականակուռ լայն սրեր։

Գլուխներին դրել էին
Սաղավարտներ արծաթից,
Մեծ նիզակներ ձեռքերն առած՝
Զրահ կապել կրծքերից։

Միայն սիրուն հրուսերն էին
Մատնում սեռը կանացի
Որ անխնամ թափուած էին
Ոն ուսերին առնացի։

Նրանց յետքից գալիս էին
Երկու հրսկայ զինուորներ,
Հեծած ձիանք փրփուր դարձած,
Հագած սպիտակ զրահներ։

Ճամբորդները վայր ցատկեցին
Իրանց փրփրած ձիերից։
Զոյգ զինուորներն առաջ անցան
Ու բրոնեցին սանձերից։

Եկուորները քոյրեր էին
Սիրուն Շուշանն ու Ստոդիկ,
Որ դուրս եկան կէս գիշերին
Երախանից անառիկ։

Եւ այժմ առած սուրբ պատգամը
Հայոց կանանց անվեհեր,
Պշտապէին դէպի Դուին
Եւ դէպ Տարօն կիսաւէր։

Նժոյգներից վար իջնելով
Նրանք վանքը դիմեցին,
Եւ ցանկացան գնալ տեսնել
Տայքի ծերուկ երեցին։

Սուրբ ծերունին երբ որ լսեց
Զիանց աղմուկն ու դոփիւն,
Այն դարբասից դուրս շտապեց
Առաջ գնաց հիւրերուն։

Անասելի մի խոր բերկրանք
Զարթեց նրա սրտի մէջ,
Ուր վառվում էր սէր ու կարօտ
Եւ մի սուրբ յոյս միշտ անշէջ։

Իսկ կոյսերը լուռ մօտեցան
Պատկառելի ծերունուն,
Եւ երկիւղած համբուրեցին
Նրա աջը դողդոջուն։

Գղուեց Նրանց ծեր Տաճատը
Եւ համբուրեց զգացուած,
Ու հետն առած զոյգ քոյրերին
Վանքը մըտաւ սգաղգեաց։

Եւ ծերունին սկսեց հարցնել
Ո՞ւր էր առիւծը—Վահան,
Ի՞նչ էր խորհում Հայրապետը,
Ո՞ւր էր բանակն հայկական։

Կամ թէ ո՞ւր էր ոիրդ թշնամին
Երկրի ո՞ր մասն էր քանդում,
Հայոց երկրի աւազանին
Ի՞նչ էր արդեօք լուռ խորհում։

Զքնաղ Աստղիկն երբ որ լսեց
Ծեր երեցի խօսքերը,
Ցուղուած օրտով այսպէս պատմեց
Հայրենիքի ցաւերը.

—«Մենք էլ վաղուց լուր չունէինք
Սահմաններից հեռաւոր,
Միայն երեկ ամրոց եկաւ
Յովհան գուսանն ալեւոր։

„Նա լուր բերեց թէ Թրչնամին
Զարհանդն է աւերում,
Կըրակ տուած աւան, քաղաք
Հիմքից քանդում է, այրում։

„Իսկ հայկական բանակն անվախ
Հաւաքվում է Արտաղում,
Օրհասական կըռւի համար
Դիրք է վինատում ու զինվում։

«Այնտեղ կերթայ իր քաջերով
Հայոց առիւծն անվեհեր,
Որ Դըւինում կրակ դարձած
Սպասում է անհամբեր։

«Նա ժողվել է Կամսարական
Իշխաններին ուխտասէր,
Նրա մօտն են Մարզպանն հայոց
Եւ Ռշտունիքն անվեհեր։

«Իսկ Ծերունի Հայրապետը
Ասել է քաջ Վահանին,
Որ այս անգամ ինքն էլ կըգայ
Մասնակցելու սուրբ կրուին։

«Նա գինել է Սիւնեաց երկրի
Քահանայքն ու երեցներ
Որ քաջաբար պաշտպանէ
Սուրբ հայրենիքն իր աւեր։

„Իսկ անառիկ Երախանում
Զուիկ տիկինը նաղելի
Երեկ գիշեր խորհուրդ կազմեց
Քաջ կանանց հետ Գուգարքի։

«Շատ խօսեցին հայ տիկնայքը
Աղդի ցաւը անհատնում,
Շատ կշռեցին հանգամանքներն
Ու կայացրին որոշում—

«Հրաւիրել հայոց երկրի
Քաջամարտիկ ողջ կանանց,
Որ ղէնք առած անվախ, ազատ
Պաշտպան կանգնին հայրենեաց։

«Եւ կամ վերկեն հայրենիքը
Ստրկական վիճակից,
Կամ թէ մեռնին անվախ սրտով՝
Զարհամարուած ամենքից։

«Եւ մենք ահա այսպէս շտապ
Տանում ենք սուրբ հրաւէրներ՝
Դէպի Դրին, դէպ Օրաաշատ
Եւ Ռշտունիքն անվեհեր»։

Կոյսի բերած այդ լուրերից
Խոր զգացուեց ծերունին,
Եւ բերկրանքի մի վառ կրակ
Փայլեց նրա սուրբ դէմքին։

Ձունչը կըտրած նա լսում էր
Այդ լուրերը ցանկալի,
Ապա դողդոջ, ուրախ ձայնով
Այսպէս խօսեց բերկրալի.—

— «Օրհնեա՜լ լինիս աղնիւ աղջիկ
Բարի լինի գալուստդ,
Կեանք տուեցին ծեր երեցիս
Բերած բարի լուրերդ։

«Վաղուց է որ աչքըս դրուան
Լուր կուղէի մեր երկրից,
Բայց Մամբուան ոչ ոք չեկաւ
Մեր արնաներկ աշխարհից։

«Չեկաւ նոյնպէս և ոչ մէկը
Գուսաններից հայրենի,
Չեկաւ պանդուխտ կամ մի օտար
Որ իմ կարօտս առնէի։

„Այժ եմ մաղթում հայոց քաջին
Զօրքին անյաղթ մի հաւատ,
Կեանք եմ խնդրում կռուող կանանց
Եւ հայրենեաց յուսահատ։

«Կեանք եմ մաղթում Հայրապետին
Եւ մի վիճակ բարելից,
Ստուած օրհնէ սուրբ ծերունուն,
Որ տանջւում է վշտալից։

«Իսկ ձեզ, կուսանք ես օրհնում եմ,
Աստուած լինի ձեզ ընկեր,
Գնացէք անվախ, ուր կանչում է
Խեղճ հայրենիքը մեր աւեր։

«Իսկ ինձանից բարև տարէք
Համբոյր տարէք վշտալի
Այն հեռաւոր ու յուսահատ
Հողին, ջրին հայրենի։

«Որ սգում է ու հառաչում
Բունակալի լծի տակ,
Որ յուսահատ հայեացքն ուղղած
Մեզնից կուզէ մի փրկանք»։

Երբ հանգչեցին Մամբուանում
Ճամբորդները նազելի,
Պատուիրեցին շուտով բերել
Երիվարներն ամեհի։

Նորից ելան համբուրեցին
Աչը Տաճատ ծերունու,
Եւ շտապով թռան հեծան
Նժոյգներին ահարկու։

Եւ դեռ Տայքի սահմաններում
Շատ չհեռացած աւանից,
Սուրհանդակներն հանգիստ առան
Ու ցած իջան ձիերից։

Համբուրեցին նրանք իրար
Ու բարի երթ մաղթեցին
Եւ խփելով նրժոյգներին,
Տարբեր կողմերը գընացին։

Մէկը գնաց դէպ արևմուտք
Պարխար լերանց լանջերը,
Միւսը քշեց դէպի առաջ—
Այրարատի լեռները։

Եւ շատ չանցած, աչքից կորան
Կուսանքն հայոց նազելի,
Փոշին ծածկեց սպիտակ ուղին
Լռեց դռփիւնը ձիերի...

ՆՈՒԱԴ Է.

ԴԻՒՆԻ ԵՒԵՒՕՏԸ.

Այնտեղ, ուր որ այսօր միայն
Մահուան դալուկն է տիրում
Ուր մենասէր, սրգուոր քամին
Խեղճ ձայնով է հեկեկում,

Ուր սրգում են մոլոր, մենակ
Ուերակաց կոյտերը,
Եւ ողբում են անդուր ձայնով
Խաւարասէր բլուրը,

Կար ժամանակ, որ այդ վայրում
Հզօր, ուրախ, փառաւոր
Մեծ Դիւինն էր հանդիստ առնում
Իր փառքերով դարեւոր։

Իսկ այսօր լոկ վայող քամին
Մտհուան մի երգ է երգում,
Ցոյզով լցնում ճնշուած հոգին
Սիրտը ցաւով աղմըկում։

Բայց այսպէս չէր այն ժամանակ
Երբ նա անկախ էր, ազատ
Երբ իր համար կեանքն էր ղոհում
Իր քաջ որդին հարազատ։

Ո՜, այսպէս չէր այն օրերը
Երբ որ կոյսը հեղ Աստղիկ
Տայոց երկրից եկաւ Դւին
Որպէս անվախ մի ռազմիկ։

Երբ հետն առած սուրբ պատգամը
Հայոց կանանց անվեհեր,
Ներկայացաւ զօրավարին
Եւ Մարզպանին ալեհեր։

Խոր էր քնել այն դիշերը
Դւինն հսկայ ու անդորը,
Միայն քամին նրա համար
Երգել էր մեղմ մի օր օր։

Լայն ու բարձր պարիսպները
Որպէս մի մայր գթառատ,
Սեղմել էին իրանց գրկում
Հին քաղաքը բազմամարդ։

Մեծ Դուինի քունն անուշ էր
Նման քնին այն մարդու,
Որն աղատ է վիշտ ու հոգսից
Ցաւերը չունի տանջելու։

Լայն պարսպի ժանիքները
Ցցուած էին դէպի վեր,
Պանդնած հպարտ ու յաղթանդամ
Որպէս վիշապ անվեհեր։

Որոնք իրանց բարձունքներով
Ցօղն են խլում ամպերից,
Եւ ներկվում են ոսկէ գոյնով՝
Արշալոյսի շողքերից։

Եւ այդ օրն էլ հաստ ժանիքներ
Փայլփլեցին ոսկեվառ,
Երբ ներկուեց ջինջ կամարը
Եւ լեռները շար՝ի շար։

Զարթեց անհոգ հայ զինուորը
Գիշերային խոր քնից,
Հայեացք գցեց մեծ քաղաքին
Աշտարակի բարձունքից։

Ապա հպարտ դարձաւ նայեց
Ասպարանքին հայկական,
Ուր ապրում էր դիւցազն հայոց
Մամիկոնեան քաջ Վահան։

Եւ զգայուած հայ առիւծի
Հերոսական գործքերից,
Այն մեծ քաջին նուիրուած
Երգը երգեց բերկրալից։

ՋԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

«Անցիր լուսին էլ մի՛ շողայ
Հայոց չքնաղ երկնքից,
Խիստ ես դժգոյն նրա դիմաց,
Ով որ քաջ է ամենքից։

„Դու էլ անցիր երկնից արև
Եւ թագնուիր ամպի տակ,
Հայոց երկրի արևն այրող
Միշտ է փայլուն ու յստակ։

«Անցէք դուք էլ, ո՞վ աստեղունք
Ձեր շողերով թախծալից,
Ձեզնից պայծառ բոցեր թրռան
Հայոց քաջի գոռ սրբից։

„Հայոց երկինք, հայոց աշխարհ
Թող քո արդանդն օրհնուի,
Որ մեզ համար ծնար Վահան
Այդ առիւծը ամեհի՝»։

Երկը կըտրեց... զինուորն ինչաւ
Աշտարակի բարձունքից,
Մեծ քաղաքն էլ քնից զարթնած
Ուրախ խնդաց բերկրալից։

Այդ ժամանակ մեծ դարբասից
Քաղաք մըտաւ մի գուժկան,
Որի յետքից նժոյգն հեծած
Գնում էր մի պահապան։

Ձիանց ուժգին դոփիւններից
Ողջ Դուինը դղրդաց,
Իսկ գուժկանի սիրուն տեսքից
Ամբոխը մնաց զարմացած։

Ո՞վ էր չքնաղ այն եկւորը
Կամ ինչ գոյժ էր նա բերում
Ոչ ոք կրցաւ հասկանալ
Հայոց ապշած քաղաքում։

Իսկ այն գուժկանն արագ-արագ
Սպարապետին մօտեցաւ,
Թեթև ու նուրբ շարժումներով
Ահեղ ձիուց վար իջաւ։

Երբ եկւորի գալը լսեց
Սպարապետն ահաւոր,
Շտապ քայլով առաջ դիմեց
Մի յարգանքով անսովոր։

Գուժկանն եկող Աստղիկ կոյսն էր
Որ գալիս էր հիւսիսից,
Հայոց տիկնանց պատգամն առած,
Որ լուր տանի հայ երկրից։

Իսկ երբ լսեց զօրավարը
Կոյսի գալու նպատակ,
Դունում դանւած ռազմիկներին
Շուտով կանչեց ապարանք։

Եկան մէկ-մէկ հայոց երկրի
Իշխանները անվեհեր,
Նկաւ նաև Հայրապետը
Սուրբ Յովհանը ալեհեր։

Իսկ երբ ամենքն հաւաքուեցան
Մեծ դահլիճում միատեղ,
Նիստը բացեց սպարապետը
Զայնով հզօր ու ահեղ։

Պատմեց նրանց մօր պատգամը
Եւ նպատակն հայ տիկնանց,
Ապա կարդաց և նամակը
Գորովագութ մօր գրած։

Ապշած ու լուռ լսում էին
Իշխանները ուխտասէր
Հայոց կնոջ սուրբ պատգամը
Նրա ուխտը անվեհեր։

Երբ աւարտուեց ընթերցումը
Մի վէճ սկսուեց նրանց մէջ,
Թէ ինչ գրեն հայոց տիկնանց
Գործին ինչպէս տան մի վերջ։

Իշխաններից մի քանիսը
Եւ սուրը Յովհան Ծերունին,
Յարմար գտան որ տիկնայք
Գան մասնակցեն այս կռւին։

Իսկ անվեհեր առիւծն հայոց
Եւ քաջ Ներսէհն ու Հրահատ
Այլ կերպ էին խօսում, վիճում
Ու դիմադրում անընդհատ։

—«Մենք հերիք ենք, միշտ կրկնում էր
Մամիկոնեանն ահաւոր,
Մեր սրերը կընան տանել
Յաղթութիւններ փառաւոր։

Իսկ մեր տիկնայք թող սովորին
Յաղթող որդոց դուրս գալ դէմ
Եւ պսակել այն քաջերի
Ճակատները քրտնագէմ։

—«Մենք հերիք ենք կրկնում էին
Կամսարական քաջերը,
Մենք չենք տանի մեր մայրերին
Դէպի լերանց լանջերը։

«Իսկ երբ ընկնի վերջին հայը
Անհաւասար մեր կռուում,
Թող պաշտպանուին տիկնայքն հայոց
Ինչպէս իրանք են ուզում։

«Բայց ամօթ է այստեղ քննել
Պարտուած հայի վիճակը,
Վկայ է Աստուած, ո՞վ իշխաններ
Քաջ է հայոց բանակը։

«Մեզի համար չէ բացուելու
Անարպանքի մի դառն օր,
Գրե՞նք, գրե՞նք հայոց տիկնանց
Ուրախ մնան, բախտաւոր»։

Իշխաններըը կամաց կամայ
Հաշտուեցան այն մտքին,
Որ հայ տիկնայքն աւելորդ են
Օրտաղ լերանց մեծ կռուին։

Նրանք շուտով պիտի սլանան
Դէպի հզօր Թըշնամին,
Որ կաղմ, պատրաստ մօտենում է
Զարևանդի սահմանին։

Իսկ երբ իրանք յետ կը դառնան
Ժողովելու նոր ոյժեր,
Այն ժամանակ կոչ կուղարկեն
Տայքի տիկնանցն անվեհեր։

Իսկ այսօր լոկ յանձնարարուեց
Հայոց քաջին ամեհի,
Գրել տիկնանց՝ որոշումը
Իշխանական ժողովի։

ՆՈՒԱԴ Ը.

ԸՌԻԻԹՆԵՐԻ ԲԸՆՌԿԸ.

Գիտեմ Հայկակ, ամեն ռազմիկ
Ունի միակ մի նպատակ,
Թէ ՝ երբ կըգայ ու կը հասնի
Ահեղ կըռւի ժամանակ.

Որ ինքն անվախ տռաջ խաղայ
Վրէժն առնի թշնամուց,
Կըռւի ահեղ, արեան դաշտում
Թափէ սրտի թոյնն ու բոց։

Եւ արդ նորից եկաւ, հասաւ
Այն երջանիկ ժամանակ,
Երբ ժողովեց քաջ Վահանը
Առիւծների գոռ բանակ։

Նոր էր ընկել շողքն արևի
Դունայ հսկայ պարսպին,
Երբ ռազմիկներն ամեն կողմից
Դէպ ապարանք վուրթացին։

Նրանց երկար նիզակները
Եւ սրերը շողշողուն,
Փայլում էին արևի տակ
Ինչպէս երկինք պսպղուն։

Փայլում էին վառ գոյներով
Արծաթապատ դրահներ,
Ճողում էին, վառվում, հանդչում
Որպէս հրեղէն լեզուներ։

Եւ շատ չանցած ամբողջ վայրը
Ռազմիկներով ծածկուեցաւ,
Խօսք ու շչուկ, համբոյր, աղմուկ
Ամեն կողմից լսուեցաւ։

Եկան մէկ-մէկ իշխանները
Հեծած ահեղ նժոյգներ,
Եկաւ նաև հայոց երկրի
Ծեր Մարզպանը ալեհեր։

Իսկ այդ ժամին յանկարծ լսուեց
Խորհրդաւոր մի շշուկ,
Կամաց-կամաց կտրուեցին
Բարձր ձայներն ու աղմուկ։

Եւ զօրքն հայոց խոր յարգանքով
Հայեացքն հիւսիս դարձրած՝
Տեսաւ եկող ահեղ վաշտը
Ոտքից գլուխ սև հագած։

Մռայլ էին եկողների
Հայեացքները ահաւոր,
Թէև նրանց լայն կրծքերին
Խաչեր կային փառաւոր։

Ա՜րդ, Յովհաննն էր, որ գալիս էր
Հայոց զօրքին խառնուելու,
Յետքից քցած մի շքախումբ
Մի շքախումբ ահարկու։

Նժոյգն հեծած սուրբ ծերունին
Ընթանում էր առջևից,
Իսկ տասներկու եպիսկոպոս
Գնում էին յետևից։

Ապա վացսուն արեղաներ
Եւ չորս հարիւր քահանայք,
Հագած զրահ, կաղմ ու պատրաստ
Ընցնում էին շարունակ։

Այսպէս եկաւ մասնակցելու
Եկեղեցու սուրբ պետը,
Այսպէս եկաւ նա յայտնելու
Միրած աղդին իր սէրը։

Խորհրդաւոր այդ վայրկեանին
Նորից լսուեց թմբկի ձայն,
Որ կարգի էր հրաւիրում
Հայոց զօրքին ցիր ու ցան։

Հրաժեշտ տուին փեսաները
Գեղ հարսներին սիրասուն,
Հրաժեշտ առաց անվախ մայրը
Քաջամարտիկ իր որդուն։

Եւ այդ ահեղ ժխորի մէջ
Ուր որ վեհ էր ամեն բան,
Ցանկարծ լսուեց աղիողորմ
Մանուկների լացի ձայն։

Նրանք որ միշտ սովոր էին
Սիրած հօրը փարուելու,
Առանց որոնց նրանց կեանքը՝
Դուցէ միշտ էր սենալու։

Թէև լացով բայց պատուեցան
Այն ռազմասէր հայրերից,
Նրանց լացն էլ շուտ խլացաւ
Հսկաների որոտից։

Ապա տիրեց մի լուութիւն
Զօրքը կանգնեց յարգանքով,
Երբ դուրս բերին զօրավարի
Նժոյգն ահեղ ու կորով։

Չէր հանդարտուել կապուտակ ձին
Դեռ դոփում էր շարունակ,
Երբ երևաց առիւծն հայոց
Ձեռքին բռնած մի դրօշակ։

Զօրքը ապշեց նրա տեսքից
Ցարգանք տուեց իր պետին,
Որոտնդոստ կեցցէներից
Օդը թնդաց սաստկապէս։

Դեղեցկատես քաջի դէմքին
Գարձեալ հուր էր շողշողում,
Սև աչքերը վառ լոցերով
Արևի պէս են փայլում։

Խոպոպները թափուած էին
Իր ուսերին գեղանի,
Որ տալիս էր հայոց քաջին
Առիւծի տեսք ամենի։

Նուրբ ընչացքը նա ոլորեց
Հայեացքն ուղղեց դէս ու դէն,
Հափեց ոյժերն իր քաջերի,
Կանգնած ուրախ, ժպտադէմ։

Ապա հեծաւ իր նժոյգ ձին
Զօրքին տուեց մի նշան,
Որից յետոյ վաշտերն հայոց
Մէկ-մէկ առաջ շարժուեցան։

Եւ նա ընկաւ զօրքի առաջ
Սուրը ձեռին շողշողուն,
Որի յետքից գնում էին
Հեծեալ վաշտեր զարդարուն։

Նրա յեսքից, որ արևն էր
Հայոց անբաղդ աշխարհի,
Որը վաղուց կեանքն էր զոհել
Ահեղ գատին հայրենի։

Ա՜խ, չէր մնացել Գողթան երկրում
Ո՞չ մի զուսան ալեհեր,
Որն ի պատիւ այդ մեծ քաջի
Չէր յօրինել բիւր երգեր։

Նա դարձել էր երգերի նիւթ
Համեստասէր գեղջկուհու,
Որի համար կեանքը ունէր
Լոկ նպատակ սիրելու։

Նրան էր միշտ զովարանում
Մայրը որդուն օրրելիս,
Նրան էին օրհներգ կարդում՝
Աղգի սև օրն յիշելիս։

Երբ զօրավարն իր բանակով
Պարիսպներին մօտեցաւ,
Մեծ Դւինի հին դարբասը
Նռինգներով բացուեցաւ։

Լայն դաշտերի կշտին նըստած
Գուսանքն էին երգ երգում,
Ողջ երթ մաղթում հայոց քաջին
Զօրքին մի ոյժ անհատնում։

Իսկ դափնեզարդ կամարներից
Զօրքերն հայոց անցկացան,
Հրաժեշտ առած, վերջին անգամ
Արագ-արագ հեռացան։

Այսպէս անցաւ բանակն հայոց
Երկրի անանց լեռներից,
Այսպէս անցաւ դաշտ ու անտառ
Իր հայրենի աշխարհից։

Միայն տեղ-տեղ մօտ գիւղերից
Հանում էին նոր գնդեր,
Ինչպէս հեղեղ թափվում էին
Այն ծով բանակն անվեհեր։

Իսկ աղմուկը հայոց զօրքի
Հանում էր խոր արձագանք,
Որի նմանը չէր լսուելու
Շատ տարիներ շարունակ։

Երբորդ օրում բանակն հասաւ
Հին Արտազի լեռներին,
Երբ թշնամու զօրքի մասին
Մեր բանակը լուր բերին։

Երբ որ լսեց առիւծն հայոց
Հայ զուժկանի խօսքերը,
Նրա սրտում բորբոքուեցան
Փոթորկալից կրքերը։

Իսկոյն և ետ նա արձակեց
Անեղասաստ հրաման—
Առնել բանակն ու շուտ տանել
Արտազ լեռներն անսասան։

Որ գիշերէ աղաս հանդիստ
Ցոգնած բանակն հայ երկրի,
Մինչ առաւօտ ոյժն հաւաքած՝
Անեղ մարտին պատրաստուի։

Եւ զօրքն ելաւ ժայռերն ի վեր
Ներսեհասլատ գիւղի մօտ,
Բանակ դրեց, հանդստացաւ
Մինչև բացուեց առաւօտ...

ՆՈՒԱԳ Թ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՐԱՆԵԿՈՒՄ.

„Կեանք իւրեանց ի մահ համարեալ
էին եւ մահ իւրեանց անշուշտ կեանք“
ՆՂԻՇԷ:

Ո՞վ կարող է, արդ մոռանալ
Այն ժխորը ահարկու,
Ով երբ և է մարտի դաշտում
Դուրս է եկել կռուելու։

Ով հմայուած սլատերազմի
Գերմարդկային զօրութեամբ՝
Առաջ կերթայ դէպի մահը
Լցուած ահեղ բարկութեամբ։

Եւ ուր մարդը մոռանում է
Իր գոյութեան նպատակ,
Ուր չի դադրում ահեղ միտքը
Կանգ է առնում ժամանակ։

Հէ, անմուաց է այդ վեհ ժամը
Քաջի համար ռազմասէր,
Հի մուացվում խուլ որոտը՝—
Պատերազմի հրաւէր։

Հի մուացվում զէնքի շաչիւն
Խոր հառաչը յուսահատ,
Հի մուացվում խուլ ժխորի
Արձագանքը անընդհատ։

Եւ այսօր էլ երբ մեր քաջերն
Նստած էին խորհրդի,
Ցիշում էին այդ ժամերը
Պատերազմի դաշտերի։

Իսկ անցեալով սդևորուած
Դիւցազները ռազմասէր,
Դատում էին խիզախ յանդուգն
Վիճում էին անվեհեր...

—«Քաջի համար ինչ պէտք կայ
Լինել զդոյշ և խոհուն,
Նա կը յարձակուի և կը ջարդէ
Երբ կը հանի թշնամուն»։

Այսպէս էր իր մաքում խորհում
Կամսարական քաջ Ներսէհն,
Որ ձանձրացած երկար վէճից,
Հեռացել էր այդ նիստէն։

Անհանգիստ էր և Վահանը—
Այդ առիւծը անվեհեր,
Նրա կրծքի խոր հոգոյը
Արձակում էր որոտներ։

Բայց նա ունէր մի նախագիծ
Մի ծրագիր համարձակ,
Որի համար երկար վիճեց
Եւ պաշտպանեց բացարձակ։

—«Մենք չսպասենք, ասաց քաջը
Պարսից անյաղթ վեղերին,
Գրոհ կը տանք նրանց վերայ
Որպէս առիւծ դայրագին։

,,Ու կը պատուենք ամուր շղթան
Հայոց անարգ թշնամու,
Արտաղ լերանց լանջերն աղաս
Մեզ տեղ կը տան հանգչելու։

,,Եկէք թափենք մեր դայրոյթը
Բռնակալի զօրքի դէմ,
Բոցոտ շնչով մեր թշնամուն
Մի հարուած տանք մահադէմ։

,,Չէ՛, իշխաններ ես չեմ ուզէ
Արպէս երկչոտ թաղնուել,
Եւ թշնամու սրի առջև
Ինարպ հոգով խոնարհուել։

,,Հեռներն հայոց մեղ ինչ կասեն
Այդքան խեղճուկ տեսնելիս,
Դամ չպէտքէ մեզ անիծէ
Ցիշատակը նախորդիս''։

Խօսքը կտրեց անվախ քաջը
Խոր հոգոցով որոտաց,
Իշխանները հայոց երկրի
Երկար մնացին շուարած։

Սպա եյաւ Հայրապետը
Օրհնեց քաջին աննման,
Որ չ'պիտէ վախ ու երկիւղ
Որպէս ուիւծ անսասան։

—,,Ես էլ քեզ հետ համաձայն եմ
Ո՞վ քաջ հայոց զօրավար,
Ամօթ է մեզ պաշտպանուիլը
Եկէք կռուենք քաջարար։

,,Թող սրատով առաջ խաղայ
Մեր քաջերի բանակը,
Եւ ծածանէ սուրբ դրօշակը
Քաջ Պալունի Փափակը։

,,Հրահատ, Ներսէհ Կամսարականը
Թող այժ չնչեն զօրքերին,
Որ տակաւին չեն վարժուած
Ամօթապարտ փախստին''։

— «Ես էլ այդպէս եմ կամենում—
Խօսեց Մարզպանը-Սահակ,
Որ լուռ ու մունջ նստած էր
Ամբողջ վէճի ժամանակ։

„Ո՞վ իշխաններ, ինչի սպասենք
Մեր այս անանց կիրճերում,
Մենք յարձակուինք, որ փառք դնենք
Անհաւասար այս կրուում։

„Սակաւաթիւ մեր զօրքերը
Որպէս մի գունդ հրեղէն,
Մենք կը մղենք դէպի առաջ
Այս ահաւոր լեռներէն։

„Սպարապետը թող աշխատի
Աղմուկ քցել ու չփոթ,
Մեր լեռներն էլ գիտեն հանել
Սհեղ ձայներ ու որոտ։

„Սհեղասաստ այդ կրուի մէջ
Չ'տանինք էլ յաղթանակ,
Գոնէ կասեն մեր յետնորդքը՝—
Պատի՛ւ քեզի, քաջ բանակ"։

Երբ որ լսեց այս խօսքերը
Սուրբ Վահանն անվեհեր,
Տեղից ելաւ, խոժոռ դիտեց
Խեղճ Մարզպանին ալեհեր,

Որ թոյլ տուեց յայտնել մի միտք
Քաջի համար անվայել.
Որ հայկական քաջ բանակին
Պարտուած կարծեց նա տեսնել։

—«Մի՞թէ խօսքէ—եթէ չյաղթենք
Կամ յաղթուինք մենք պարսկից»,
Էլ ինչի՞ են երկար խորհում,
Մտքեր խլում իրարից։

—«Ո՞վ է տեսել, խօսեց քաջը
Անյաղթ հային պարտուելով,
Երբ նա մի ոյժ ու միասին
Կռիւ կը տայ ապահով։

„Հաւատացէք ինձ իշխաններ
Մերն է փառքն ու յաղթութիւն.
Եւ սա է լոկ ճանապարհը,
Որ պիտ տանի փրկութիւն։

„Ազատ մեծցած հայ ռազմիկը
Մի առիւծ է ամեհի,
Որի զոյրոյթն հուր է ու բոց
Կամքը անյաղ՞թ, սոսկալի՞։

„Չէ՞ չենք թողնէ, որ կործանուի
Մեր աշխարհը որբազան.
Եւ չենք թոյլ տայ, որ նա լինի
Լոկ մեզ համար գերեզման։

„Այժ կը շնչենք լքուած հային
Սրտին—անշէջ մի կրակ,
Որ յետ գնէ կորած փառքը
Եւ պատիւը ոտնատակ։

„Արնոտ երկրի կոծն յուսահատ
Կը բորբոքէ մեր հոգին,
Եւ մեզ կը մղէ վրէժի բոցով
Դէպի ազգի թշնամին։

„Մենք կը չորցնենք մեր դաշտերի
Արնով ներկուած գորշ ցողը,
Իսկ այն ցողով սէր կը բուսցնէ
Հայոց երկրի սուրբ հողը։

„Ուրեմն այսպէս մենք կը յարձակուինք·
Ու ջարդ կը տանք քաջարար,
Աղնուութեամբ ու պատուով
Փառք կը գնենք մեզ համար“։

Երբ կանգ առաւ դրօշավարը
Ու իր խօսքը ընդհատեց,
Ռազմիկների վեհ խորհուրդը,
Մտքերի մէջ ընկղմուեց։

Բայց լռութիւնն—երկարատև
Սահակ Մարզպանն ընդհատեց,
Որ կանգնելով ծանր ու հանդարտ
Ջօրավարին հարց տուեց.—

—«Այժմ ասա, աղնիւ իշխան,
Վերջին հարցն էլ թող լուծուի,
Ի՞նչպէս բաժնենք մեր զօրքերը,
Ո՞վ ո՛ր կողմից յարձակուի։

„Ո՞րս մեղնից առաջ խաղայ
Առաջապահ զօրքերով,
Կամ ո՞վ հասնի մինչ թշնամին
Նւ լուր բերէ ըշտապով“։

—«Առաջապահ զօրք հանելու
Կարիք չկայ, ո՛վ Մարզպան,
Բայց թևերը մենք կը բաժնենք
Մեր քաջերին պատուական։

„Թող ձախ թևը ձեզի լինի
Կամսարական հերոսներ,
Դուք սիրումէք կռիւն ահեղ
Աղատ մարտը անվեհեր։

„Իսկ աջ թեւը մենք կը յանձնենք
Վահեւունի քաջ Բաշխին,
Նրան ընկեր մենք կը կարգենք
Սիւնեաց անվախ Բարգէնին։

„Իսկ Գնունի Ատոմն անվախ
Եւ քաջ Փափակ Պալունին,
Պատրաստ լինին միշտ օգնելու
Տկարացող կողմերին։

„Դուք էլ, ո՜վ տեարք, հայոց Մարզպան
Եւ սրբազան ծերունի,
Ձեր դիրքերին, պատուին յատուկ,
Միջին կողմը ձեզ լինի։

„Իսկ քաջերը Պապն ու Վրէն
Առիւծային կրծքերով,
Կը գան ձեզի օգնելու
Իրանց անյաղթ զօրքերով։

„Ես էլ մենակ, քաջերս առած
Առաջ կը խաղամ անդադար,
Որ չտապով սարսափ ազդեմ
Պարսից զօրքին անհամար“։

Նորից սիրեց մի լուսթիւն
Իշխանական ժողովում,
Նորից սուգուան դիւցազները
Մտրի ահեղ ովկիանում։

Ապա հպարտ այն քաջերը
Մէկ—մէկ տեղից վեր կացան,
Ու խորհրդի վրաններից
Կամաց կամաց հեռացան...

ԴԱՎԻԹ Ա.

ՎԵՀԵՆԸ ՄԵՆԱԿ

„Դուէ որ կարողդ էք. զգկարութիւն ցկարացն բարձէք"։
ԵՂԻՇԷ.

Բանակի մէջ տեղ, վարթամ վրանում
Նստած էր մենակ դիւցազն ահաւոր,
Եւ խորասուղուած մտքերի ծովում
Թռչում էր դէպի դարերն հեռաւոր։

Երբեմն յուզուած, որպէս մի առիւծ
Հայացքն էր դարձնում հայոց բանակին,
Որ անվախ, աղատ հանգչում էր լռիկ
Արտաղի լերանց ժայռոտ լանջերին։

Եւ քանի՞ քանի՞ այդպէս դիշերներ
Հայոց զօրքերը բանակ են դրել,
Արտաղ, Աւորայր, Հեր ու Զարևանդ
Մարդկային կարմիր արնով ողողել։

Եւ այսօր նորից բանակ հայկական
Պատրաստ է չափել իր ոյժը բաղկի,
Ու հեշտ չծախել պատիւն ու փառքը
Դարերով պաշտուած ուրբ հայրենիքի։

—«Բայց ինչի՞ համար այդպէս է խորհում,
Այդպէս է ուզում գաղանն ահաւոր—
Խօսեց վերջապէս դիւցազն ամեհի
Որպէս մի առիւծ անյա՛ղթ, վիրաւոր։

„Եւ կամ քանի՞ դար այսպէս շարունակ
Գէտքէ անց կենան մէկ մէկի յետքից,
Մինչև ազատուի սիրտը մարդկային
Իր գաղանային չար հակումներից։

„Մարդու մէջ մեռնի եսը անողոք,
Դաւանանք դառնայ—սիրել ուրիշին,
Եւ այս արնաշաղ աշխարհն ահաւոր
Շմնայ բաժին անգութ զօրեղին։

„Բայց ո՛չ, չէ՛ գալու երջանիկ մի օր
Ծամը մեր ձգտմանց սուրբ յաղթանակի,
Եւ բիւր դարերը բիւր ոճիրներով
Գնիք պիտ դնեն անվերջ ամօթի։

„Եւ այն ժամանակ, երբ միտքն անկապանք
Կը քննէ աղատ երկինք ու երկիր,
Դեռ մարդ-գաղանը անլուր կրքերով
Մեր մայր երկիրը պիտ ներկէ կարմիր։

„Միտքը այժ կը տայ նոր հնարքների
Եղբայրն եղբօր դէմ անվերջ զինելու,
Սիրտ ու դաւանանք ծաղրելով անվերջ
„Քրիստեան“ անունով արիւն թափելու...

„Եւ անթիւ դարեր, կրօններ նոր-նոր
Անդօր պիտ լինին մարդկանց ազդելու,
Մարդը կը մնայ իր ձգտումներով
Միշտ անգութ գաղան, միշտ արիւնարբու։

„Կրօնի քարոզած սուրբ սկզբունքներն
Երբէք չպ'էտքէ մեր մէջ մարմնա,
Եւ եղբայրական քարոզն ու խրատ
Ընատենչ կամքին նոր ղէնք պիտ դառնան։

„Եւ անթիւ դարեր աշխարհը այսպէս
Բաժին կը մնայ միայն զօրեղին,
Իսկ սիրտը խղճուկ պէտքէ լուռ դիտէ
Գոյութեան կռիւ աւերիչ հետքին...

„Բայց դուք կրոններ ոյժ տուէք նրանց
Որոնք անզօր են, որոնք հալածուած
Որոնք ձեզանով կուզեն աղատել
Այս խեղճ աշխարհը արնով ողողուած։

„Իսկ ինձ երկայրի սուր է հարկաւոր
Թշնամուս հանդէպ անվերջ կռուելու,
Իմ իրաւունքներն արհամարողի
Կարմիր արիւնը երկիր թափելու։

„Եւ սա կը մնայ ինձ լոր դաւանանք
Մի վերջին միջոց աղգիս փրկութեան,
Որ դինուած վառուած կանգնած անհամբեր
Կըսպասէ նորից կըռւին յաղթական“։

Խօսքը կտրեց այն առիւծը
Եւ արձակեց մի հառաչ,
Որ որոտաց լուռ վրանում
Ինչպէս ծովի մի շառաչ.

Որ բաղխելով ժայռոտ ափին
Կուզէ քանդել ամեն բան,
Սակայն նորից յորձանքներով
Ծով կը դառնայ անսահման։

Եւ բարկութեան այդ վեհ ժամին
Նորից նստեց աւիւծը,
Դլուխն յենած ուժեղ ձեռքին
Բոցեր ցայտեց կրծքիցը.—

—«Ո՜վ իմ բանակ, այս անդամ էլ
Դու կը տանիս յաղթանակ,
Եւ չեմ թողնէ, որ երբ և է
Ամօթ կբրէ քո դրօշակ։

„Եւ մենք նորից ուրախ, հպարտ
Պիտի դառնանք դէպ Դրւին,
Ողատ մարդու վսեմ վառքով
Ողջունելու ամենքին։

„Բայց ես կուզեմ, որ շուտ բացուի
Նուիրական այն սուրբ օր,
Երբ դու նորից ազատ ապրիս
Իմ հայրենիք սպաւոր։

„Եւ ես կուխտեմ մինչ այդ վայրկեան
Վար չդնել իմ սուրը,
Ո՜ ես կուխտեմ միշտ վառ պահել
Ազատութեան այդ հուրը։

„Ես ուխտում եմ քո թշնամուց
Վրէժդ առնել դարևոր,
Եւ քո դէմքից վերացնել
Սուգդ տխուր ու մոլոր։

„Ես ուխտում եմ, իմ հայրենիք,
Սիրել քեզի անսահման,
Քո փրկութեան, վառքի համար
Զրնայել ոչ մի բան։

„Իսկ դուք, հայոց մեղմ հովիկներ
Միշտ վեհ երգեր երգեցէք,
Եւ դուք անուշ, ջինջ վտակներ
Ուրախ երգեր կարկաչէք։

„Հայ ռազմիկն էլ շուտով կը գայ
Իր վեհ երգը երգելու,
Նրա երգը թոյն է ու բոց,
Եւ մի վրէժ ահարկու։

„Եւ մինթէ կայ ստրկութիւն
Այնտեղ ուր կայ սիրտ ու կամք,
Ուր տակաւին չեն շառաչել
Շղթաների հառաչանք։

„Ուր կայ հոգը գիտակցութիւն
Դէպի պարտքն ու գաղափար,
Ուր կայ հպարտ, անչէջ մի սէր
Դէպի աղգը վշտահար“։

Տեղից կանգնեց զօրավարը
Հաղիւ խօսքը վերջացրած,
Լուռ ու հանդարդ սկսեց քայլել
Մտքի ծովին յանձնուած։

Ապա արագ նա դուրս ելաւ
Իշխանական վրանից,
Ու մտազբաղ կանգնեց լուիկ
Այն երկնից տակ աստղալից։

Մի խոր շշուկ միայն հասաւ
Զօրավարի ականջին,
Որ զմայլուած լուռ դիտում էր
Հանդչող հսկայ քաջերին։

Ա՜խ, այդ շշուկն ինչքա՜ն չասեց
Այն առիւծին ահարկու,
Որքա՜ն մտքեր, որքա՜ն ցաւեր
Ցաջորդեցին իրարու...

ԴՈՒՍԳ ԺԱ.

ԲԵՆԵԿԻ ԽՈՀԵՐԸ.

Լուռ գիշերին, երբ հանդչում էր
Անվախ բանակն հայկական,
Ցանկարծ տիրեց մի լռութիւն
Եւ դադարեց ամեն ձայն։

Չէին լսվում ուրախ երգեր
Եւ մեղմ ձայնը բամբիռի,
Դադարել էր չկայունը
Որոտացող զէնքերի։

Չէին գովում գուսանները
Փառքի օրերն Հայկազանց,
Չէին հնչում բամբիռները
Վիշտն ու լացը հայրենեաց։

Հանդարդ այրուող խարույկներից
Միայն ծուխն էր դալարվում,
Եւ մեղմ լուսնու շողքերի տակ
Դէպի երկինք բարձրանում։

Եւ ժամ առաջ բանակն ուրախ
Խոր լռել էր ահալի,
Մի լռութիւն, որ նման էր
Հանդարդ ծովին ամեհի։

Բայց ինչի՞ էր այդպէս լռել
Հզօր բանակն հայկական
Ինչ՞ էր խորհում հայ ռազմիկը՝
Այդպէս տխուր ու անձայն.

—Պատերազմի ահեղ ոգին
Ունի մի խոր „լռութիւն“,
Ուր կրուվում են, թէև անձայն
Մահն ու կեանքի փրկութիւն։

Ուր ամեն ոք խորասուզուած
Մտքի ծովում հեռաւոր,
Անձայն ու լուռ կսկսէ յիշել
Գալիք ըսպէն ահաւոր.

Երբ կը շաչէ անդութ սուրը
Մարդկանց կեանքը հնձելու,
Երբ ռազմիկը սիրտը արիւն
Կերթայ մահը գրկելու։

Երբ կը մոռնայ մարդ էակը
Կարեկցութիւն ու գթութիւն,
Երբ որ կուզէ լափել անվերջ
Որպէս դազան մի վայրագ։

Եւ անդգայ նա կընդունէ
Մահուան բաժակն ահաւոր,
Կամ թէ հպարտ, քաջ յաղթողի
Փառքը ահեղ ու հզօր։

Օ՜ մեր բանակն այդ գիշերին
Մտքերի մէջ ընկղմուած,
Լուռ ու տխուր այս էր խորհում
Մտքի ծովին յանձնուած։

Մէկն յիշում էր կարօտ թողած
Ընուչ մօրը սիրելի,
Միւսն—անոք իր քրօջը,
Կամ վիճակը որբ զաւկի։

Մատաղ զինուորն յիշում էր լուռ
Իր իղձերը անհամար,
Որին գուցէ չէր բացուելու
Մի առաւօտ վերկաբար։

Եւ այն ահեղ ժխորի մէջ
Պիտի մարէր կեանք ու յոյս,
Ու իր ծաղիկ, վառ յոյսերին
Գրկէր տխուր վերջալոյս։

Բայց հայկական բանակն անվախ
Շատ չըխորհեց տխրագին,
Եւ մեղկաբար նա չը ընկճեց
Ահեղ սիրտն ու վեհ հոգին։

Լուռ բանակի հարաւ կողմից
Ցանկարծ լսուեց մի մրմունջ,
Որ հնչվում էր մեղմ ու անուշ
Եւ տարածում մի շըշունջ։

Բանակ հասնող հայ գուսանի
Բամբռի ձայնն էր թախծալի,
Որ այդ ահեղ, խոր գիշերին
Հնչուեց այնքան ցանկալի։

Գուսանն եկեսը ծեր Յովհաննն էր,
Հայոց փառքի ծեր վկան,
Որ հազիւ հազ ուշ գիշերին
Հասաւ բանակն հայկական։

Եւ անբաժան հայոց զօրքից
Այս անգամ էլ ծերունին,
Արտաղ հասաւ շունչը կտրած
Ընկերակցել բանակին։

Եւ ծերուկը ուշ գիշերին
Բամբիռն անուշ հնչեցրեց,
Անմահ նախնեաց գովքն երգելով՝
Լսողների սիրտն այրեց։

Վրայ հասան զինուորները
Ամեն կողմից բանակի,
Վրդովելով լուռ գիշերուայ
Խոր լռութիւնն ահալի։

„Յովհաննն եկաւ“ խոր շշուկը
Ողջ բանակում տարածուեց.
Եւ ամեն ոք խոհը թողած
Դէպի գուսանը վազեց։

Քաղցը էր հնչում մեղմ բամբիռը
Ծերուկ երգչի ձեռքի մէջ,
Քաղցը էր մնջում ու հեկեկում,
Նրա ցաւն էլ էր անչէջ...

Բայց ծերունին երկար չ՚երգեց
Հայրենիքի ցաւերը,
Հանգչեց մի քիչ ու յարդարեց
Բամբռի յոգնած լարերը։

Եւ զգացուած երգեց երգը
Ակռռիի քաջերի,
Որ ծերունին յորինել էր
Ի յիշատակ այդ կռուի։

ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ։

„Ելաւ արփին ոսկի շողով
Իր լուսեղէն աշխարհից,
Լոյսից պայծառ շողերը ելան
Հայ քաջերի սրերից։

„Արփին ելաւ ու ողողեց
Հայոց սիպտակ սարերը,
Հայ ռազմիկը կարմիր ներկեց
Լայնատարած դաշտերը։

„Ո՛չ մի որոտ աշխարհն այնպէս
Չէր դղրդել սաստկագին,
Ինչպէս անյաղթ հայոց զօրքի
Գրոհն ահեղ և ուժգին։

„Դողաց հրսկայ ծեր Մասիսը
Այդ մահաշունչ որոտից,
Սարսափեցին դաշտ ու անտառ
Թափուած արեան գետերից։

Եւ Ակռին, հայոց գիւղը,
Տեսաւ փառքը հայ ղէնքի,
Տեսաւ ինչպէս բանակն անվախ
Զարդեց պարսկին ատելի։

„Տեսաւ քաջին Կամսարական
Որպէս մի ժայռ ահաւոր,
Որ չ՝գիտէ նահանջն ի՞նչ է,
Ինչպէս առիւծ վիրաւոր։

„Արփին անցաւ, վերջին շողով
Գարմիր ներկեց ամպերը,
„Ցաղթեց քաջը— անյաղթ ներսէհն"
Որոտացին լեռները"։

Ծեր երգիչը երգը կտրեց,
Կըտրեց ձայնը բամբիռի,
Որ մեղմ, անուշ մրմնջում էր
Փառքը հայոց քաջերի։

Իսկ լսողներն այն զգացուած
Խինդ ու ծիծաղ բարձրացրին,
Բիւր պատիւներ, անթիւ օրհնանք
Ծեր գուսանին մաղթեցին։

Ոգեւորիչ անուշ երգը
Վառեց, յուզեց ամենքին,
Մոնչեցին հայ քաջերը
Որպէս առիւծ զայրագին։

Իսկ կէս գիշերն արդէն անցած
Բանակն սկսեց մրափել,
Խարոյկները հանգան մէկ մէկ,
Լուսինն երկնից էր անցել։

Միայն երբեմն խուլ լսվում էր
Գահասլանի ոտքի ձայն,
Որ հսկում էր անքուն աչքով
Մեր վաշտերին ցիր ու ցան։

ԴՈՒԱԳ ԺԱ.

ՊՈՏԵՐԱԶՄ։

„Մահ ոչ իմացեալ մահ է
Մահ իմացեալ անմահութիւն է՝
ԵՂԻՇԷ։

Այն սուրբ վայրերն, որոնք այսօր
Խոպան դարձած, ամայի
Հառաչում են դեռ չ՝սորուած
Անարգ լծին օտարի.

Որոնց այսօր կապկապում է
Բռնակալի կուռ շղթան,
Ուր չի լսվում ոչ մի շշուկ,
Կենդանութեան ոչ մի ձայն,

Կար ժամանակ և ոչ հեռու
Երբ այդ երկրում սրբանուէր,
Հնչում էին, խրոխտ թնդում,
Սուրբ յաղթութեան որոտներ։

Լերանց վերայ որպէս արծիւ
Հայ ռազմիկն էր սլանում,
Ազատութիւնն իր հայրենեաց
Արեան գնով պահպանում։

Դէհ, դու լսիր, բարի՜ Հայկակ
Ինչ՞պէս կրուեց քաջարի
Այն բանակը, որին զինեց
Մամիկոնեանն ամեհի։

Ո՜, դու լսիր հպարտ, ուրախ
Հայ ռազմիկի վեհ փառքը,
Որ դարերին աւանդ թողեց
Ազգի վսեմ պարծանքը...

Երբ եկեցան երկնից վերայ
Վառ արևի շողքերը,
Վրաններից արագ-արագ
Դուրս թափուեցան զօրքերը։

Լուռ ու անձայն ամեն զինուոր
Զրահն հագաւ սուր կապեց,
Ձեռին բռնած լայն տղեղը,
Կազմ ու պատրաստ սպասեց։

Խորհրդաւոր այդ վայրկեանին
Լսուեց ձայնը թրմբուկի,
Որ կարգի էր հրաւիրում
Մեր վաշտերին ամեհի։

Առաջ անցաւ քաջ այրուձին
Ձեռքում բռնած լայն սրեր,
Հերդով կանգնէց զօրքն հետեւէ
Բռնած երկար նիզակներ։

Դուիում էին պինդ երկիրը
Ձիանքն ահեղ, վիթխարի,
Վրդովելով լուռ հանդիստը
Հայոց հսկայ լեռների։

Իսկ ոգեմասէր զինուորն հայոց
Սուր ու նիզակն էր շաչում,
Որոնց ձայնից երկինք, երկիր
Ահից էին հառաչում։

Ելան մէկ-մէկ վրրաններից
Իշխանները կորովի,
Նժոյգն հեծաւ Կամսարական
Անվախ Ներսէհն վիթխարի։

Հայոց ծերուկ Հայրապետը
  Եւ Մարդպանը ալեհեր
Ձիերն հեծան խրոխտ ու քաջ
  Ինչպէս զինուոր անվեհեր։

Եւ մեր զօրքերն այդպէս պատրաստ
  Բաժանուեցան թևերի,
Ինչպէս յայտնեց մեծ խորհրդին
  Հայոց առիւծն ամենի։

Այն ժամանակ սանձից բռնած
  Առաջ բերին քաջի ձին,
Որ մռունչով հառաչում էր,
  Դողում զետին անհամբեր։

Իսկ ահեղ ձին սանձն էր կրծում
  Ճուրջը նայում անընդհատ,
Երկար դիտում արձակ դաշտին
  Նորից տնքում յուսահատ։

Եւ նա կարծես կուզէր թռչել
  Բանակն հասնել թշնամու,
Կարծես կուզէր որ շուտ հասնէր
  Կռուի ժամը ահարկու։

Իսկ երբ տեսան զինուորները
Զօրավարի նժոյգ ձին,
Խորհրդաւոր մի լռութեամբ
Կազմ ու պատրաստ կանգնեցին։

Ցանկարծ լսուեց մի դղրդիւն,
Թնդաց բանակը վիթխարի,
Երբ երևաց Մամիկոնեան
Հզօր առիւծն ամեհի։

Հեծաւ քաջը փրփուր դարձած
Իր կապուտակ նժոյգ ձին,
Որ տակաւին սանձն էր կրծում
Եւ դոփում էր սաստկագին։

Ապա դարձաւ իր քաջերին
Անուշ ժպտով ողջունեց,
Եւ ձեռքն ուղղած դէպ թշնամին
Մարտի նշանը նա տուեց...

Եւ կազմ, պատրաստ բանակն հայոց
Շարժուեց դէպի թշնամին,
Որպէս մի շանթ, կրակ ու բոց
Գրոհ տուեց նա ուժգին։

Սուր սուսերներ, նիզակ, զրահ
Գրակ տուին շողացին,
Օդում լսուեց մի շառաչիւն
Լեռ ու անձաւ դողացին։

Փրփուր դարձած ձիանքն ահեղ
Դէպ թշնամին սլացան,
Դուխիւն, որոտ, բարձր հրհնչող
Ամեն կողմից լսուեցան։

Դողաց առիւծը լերան կիրճում
Հայոց զօրքի սարսափից,
Հայոց երկրի հաւքերն անթիւ
Հեռու փախան այդ ահից։

Եւ հայ բանակն այդ ահաւոր
Սիպտակ փոշու ամպերով
Մօտենում էր իր թշնամուն,
Սիրտը լցած կրակով...

Հայոց զօրքի դէմ յանդիման
Բարձր լերանց լանջերին,
Ծանր ու ահեղ բանակ դրած
Սպասում էր թշնամին։

Զրահապատ անթիւ վաշտեր
Կանգնած էին պատրաստի,
Նրանց կշտին դոփում էին
Փղերն ահեղ վիթխարի։

Անծայր դաշտում բաց տեղ չկար
Սուր ու նիզակն էր շողում,
Լեռ ու անտառ դարան մտած
Թշնամին էր սպասում։

Ակնթարթում վերացուեցան
Վրանները բիւրաւոր,
Ծուին ընդհատուեց խարոյկներից
Զարժուեց բանակն անհաւոր։

Էլ չերևաց հայոց դաշտը
Ոչ էլ լեռներն Արտազի,
Միայն լսուեց մի խուլ որոտ—
Արձագանքը լեռների։

Եւ թշնամին արագ-արագ
Առաջ խաղաց անարգել,
Որպէս մի ծով փրփուր դարձած
Վրայ վազեց շնչարգել...

Բայց այն կրակ քաջերի հետ
Ո՞վ կը յանդգնէր կռուելու,
Երբ այնտեղ էր առիւծն հայոց
Մամիկոնեանն ահարկու։

Եւ դաշտ ու ձոր զուր էր բռնել
Ողջի անարդ թշնամին,
Զուր ծովի պէս մռունչ հանեց,
Զուր էր զինել փղերին։

Հայոց փոքրիկ բանակն ահեղ
Մի անդամ էլ որոտաց,
Եւ քաջաբար մխուեց սրտում
Պարսից զօրքի սարսափած։

Նետերի ճիչ, սրի շաչիւն
Ողջ աշխարհը դղրդեց,
Որոտ, դուիւն, ռազմի ձայներ
Մինչև երկինք տարածուեց։

Ամ ու ահեակ գետին փռուան
Անթիւ փղեր ու մարդիկ,
Արիւնն հոսեց գետերի պէս
Դաշտը դարձաւ ճապաղիք։

Հայ քաջերի բանակն անվախ
Գրտրեց, անցաւ թշնամին,
Ինչպէս հեղեղ ողջն աւերեց՝
Ինչն արգելում էր իր ուղին։

Կարմիր ներկուեց ողջ երկիրը
Դաշտը ծածկուեց դիերով,
Լեռներն հայոց խոր սուգ մտան
Մեռնող մարդկանց հառաչով։

Եւ այդ ահեղ ժխորի մէջ
Օրհասական այդ ժամում,
Միայն հայոց քաջ առիւծի
Հզօր ձայնն էր որոտում,

Որ հասնում էր արծւի թևով
Տկար կողմին օգնութեան,
Որ անընդհատ այժ էր շնչում
Հայոց զօրքին անսասան։

Մութ լեռները դղրդացին
Իրարանցման ձայներից,
Երբ թշնամու նոր վաշտերը
Գրոհ տուին բարձունքից։

Եւ մի վայրկեան ապշած մնաց
Հայ քաջերի բանակը,
Երբ որ տեսաւ կազմ ու պատրաստ
Պարսից զօրքի քանակը։

Նետ ու ասպար ծովի նման
Ծփում էին, շողշողում,
Որոնդոստ խուլ ձայներով
Զէնքերն էին շառաչում։

Երբ որ տեսաւ հայ առիւծը
Որոտացող թշնամուն,
Նրա սրտում բորբոքուեցան
Կրքեր ահեղ ու անհուն

Հզօր ձայնով հրաման տուեց
Կամսարական քաջերին,
Առաջ մղել զրահ հագած
Հայոց հզօր այրուձին։

Մռնչեցին նժոյգները
Կամսարական քաջերի,
Երբ լսուեցաւ հրամանը
Սպարապետ Վահանի։

Նոր այժ սուած վերջին ճիգով
Առաջ խաղաց այրուձին,
Մինչ յաղթութիւնը շահած գիտէր
Հայոց ուժեղ թշնամին։

Նորից ելան փայլուն շողեր
Հայ քաջերի սրերից,
Նորից ընկան կուլի դաշտում
Վաշտեր վաշտի յետևից։

Որպէս մրրիկ մեր այրուձին
Նորից ցրուեց թշնամուն,
Որին չօգնեց ոչ իւր գիրքը,
Ո՛չ փղերը աննկուն։

Նորից լսուեց մեր շարքերում
Ուրախութեան աղաղակ,
Հայոց զօրքը մի անգամ էլ
Տարաւ փայլուն յաղթանակ...

Իսկ այս անգամ ո՞, վերջինն էր
Կռիւն էլ չէր նորոգվում,
Պարսից թմբկի խուլ ձայները
Մերոնց այս գոյժն էր բերում։

Եւ թշնամին յուսահատուած
Կամաց-կամաց նահանջեց,
Հայոց զօրքի խոր ցասումից
Փախուստ տալով աղատուեց։

Եւ նա փախաւ... աւար թողած
Իր բանակը քաջ հային,
Որ յաղթութեան սրտներով
Տիրեց հսկայ լեռներին։

Օրը մթնեց հանգիստ առան
Ռազմիկները կորովի,
Լերանց լանջին նորից վառուեց
Խարոյկները բանակի։

Դղրդացին ողջ լեռները
Ուրախութեան ձայներից,
Լուսինն ելաւ և հաշտ նայեց
Հայոց չքնաղ երկնքից։

Իսկ մեր զօրքը ուրախ, հպարտ
Տօնեց փառքը այդ կռուի,
Ցաղթողների գովքն երգեցին
Գուսանները հայրենի։

ՎԵՐՋԱԲԱՆ

„Զմեռ զայրոսիկ ածելով հառաջումն յիս ի ներս ընթանայ եւ տրտնջեսցէ, եւ կամեցուցանէ բառբառել բան չխրատեն եւ սգաւոր“: ԽՈՐԵՆԱՑԻ.

Անցել են գնացել անթիւ տարիներ
Այդ սուրբ յաղթութեան անմոռաց օրից,
Բայց զէնքի շաչիւն, կըռւի յաղթանակ
Էլ չըհնչուեցին այդ վեհ լեռներից։

Եւ այն վայրերում, ուր մի ժամանակ
Զէնքի շաչիւնն էր ահեղ որոտում
Այսօր միմիայն մի բաւակ քամի
Իր խորին ցաւն է աշխարհին պատմում։

Ցա՜ւ, որ չի լսում շաչիւնը զէնքի
Այն վեհ ու ժայռոտ լանջերի վերայ,
Որ այս լեռներում այսքան ժամանակ
Ուրախ տօների չի լինում վկայ։

և ամեն անգամ ուշ երեկոյան
Երբ մայր են մանում շողքերն արևի,
Մի խուլ վայրենով այդ բարակ քամին
Գալիս է անցնում երգով սգալի։

Մահամերց վշտի մի խորին թախիծ
Լուռ համակել է այդ մեծ վայրն անդորը,
Ուր մի ժամանակ յաղթողի փառքին
Վկա՛յ էր լինում, վկա՛յ դարևոր։

Եւ այդ վայրն այսօր կարծես նման է
Մի մութ ու մռայլ խոր դերեզմանի,
Ուր որ հանգչում է ժամանակն ինքը,
Ցոգնած ցաւերից անցած դարերի։

Բայց ինչի՞ համար այդ անշուք վայրում
Չի լսվում մրմունջը հայոց բամբիռի,
Ո՞, ինչի՞ համար չի հնչվում այնտեղ
Անուշ դայլայլը Գողթան երգերի։

Այն խոր ձորերից յոգնած ու մենակ
Էլ չի անցկենում զուսանն ալևոր,
Կտրում ու անցնում Արտաղն ընդարձակ,
Զուտով հասնելու ո՞վ գիտէ թէ ո՞ւր...

Գամ թէ Տղմուտի ջրրով զովացած
Չի խփում բամբռի ցաւոտ լարերին,
Եւ հայրենիքի վիշտն ու տանջանքը
Որպէս մի աւանդ թողնում դարերին։

Ո՜, ընկճատուել են այդ մրմունջները
Եւ շիայիւնը ահեղ ղէնքերի.
Սկսած այն օրից երբ հայ ռազմիկը
Մոռացաւ փառքը հզօր յաղթողի։

Սկսած այն օրից երբ նա վայր դրեց
Իր յաղթող ձեռքի սուրը փրկարար,
Երբ իր ոյժերը տարաւ, գործածեց
Օտարի ղէնքի և փառքի համար։

Երբ նա մոռացած իր կոչումն արդար
Օտարին յանձնեց աշխարհն հայրենի
Եւ նախնեաց թողած անէծքն ահաւոր
Իրեն չընթացաց երբէք սոսկալի...

Եւ կամաց-կամաց դարերի փոշին
Քանդուց, կործանեց այն շէնքն ահաւոր,
Որը մեզ թողին մեր պապերն անվախ
Որպէս մի աւանդ վեհ ու փառաւոր։

Եւ որի համար շատ անդամ նրանք
Ընդով լուացին Արտազ, Աւարայր,
Եւ որի համար վայր չընդրեցին
Իրանց ձեռքերից զէնքը վերկարար։

Իսկ այս ամայի լռութեան միջից
Եկէք ու անցէք սգաւոր հողմեր,
Ու ձեր վայունով անվերջ պատմեցէք
Աւեր աշխարհի դառնացած ցաւեր։

Մենասէր բուի անդուր երգի հետ
Դուք միշտ ողբացէք մեր վիրքը կորած,
Լսէք այն ահեղ, խոր շառաչիւնը,
Որ արձակում է շղթան ժանգոտած։

Ա՜խ, դուք լսեցէք բռնութեան զոհի
Վերջին հառաչը, ճիչը սրտառու,
Որ իր անքոցով այս ծանր օրերին
Եկաւ աշխարհի հանգիստն աւրելու։

Եւ այսպէս լցուած արդար բարկութեամբ
Ընէ՜ծք կարդացէք մեր ժամանակին,
Ընէ՜ծք կարդացէք այն հերոսների
Ստրուկ ու մոլար խեղճ ժառանգներին։

Որ այսպէս մոռցած ցպարտքը սրբազան
Տանում են այսօր և ցաւ և տանջանք,
Եւ դեռ չեն ուզէ, որ շուտ վերանայ
Իրանց ճակատից այս սև անարգանք...

Ա Ռ Դ Ե

Նախերգանք . . . 7
Ա) Վշտի երգիչը . . . 10
Բ) Դիշեր . . . 18
Գ) Ցոլհան գուսանը . . . 26
Դ) Ամբոցում . . . 34
Ե) Գանանց խորհուրդը . . . 43
Զ) Մամբռանի հանգիստը . . . 53
Է) Դեղնի առաւօտը . . . 63
Ը) Ճանապարհի բանակը . . . 73
Թ) Գիշերային խորհուրդը բանակում . . . 82
Ժ) Վահանը մենակ . . . 90
ԺԱ) Բանակի խոհերը . . . 100
ԺԲ) Պատերազմ . . . 109
Վերջաբան . . . 121

Գրադարան
Մ. Ն. Ն. 1935

ԳԻՆԸ
AT
5759